




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

173

Մի 59

Հայ արվեստի և
մշակույթի փառաբանություն

7(47.925)

Հ - 87

Հայկա 1930

2004

2010

ՆԱՇԱՐ «ՏԱԹԵԼ»Ի. ԹԻԻ 1

ՄԻ ԷԶ

ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԻ ԵՒ ՄՇԱԿՈՅԹԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԻՑ

Գրեց


ԴԱՐԵԴԻՆ ԱՐԲԵՊՍԿ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Առաջնորդ Հայոց Նոր Նախիջևանի

7(47.925)
Z-87

1930


ՏՊԱԳՐ. «ԱՐԱՔՍ» - Բ. Յ. ԹՕՓԱԼԵԱՆ - ՀԱԼԷՊ




м/г. 2000/02 1000/02

2000/02 1000/02

1931/2





ԲԱՐՁՐԱՇՆՈՐՆ՝ Տ. ԴԱՐԵԳԻՆ Ս.՝ ԱՐԲԵՊՍԿ. ՅՈՂՍԷՓԵԱՆՅ
(Լուսանկարուած՝ 1913 ին)

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Տաքևի մեծանուն աշխատակից Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Թովսեփեան քանիցս անգամ թելադրած էր որ Տաքեգիրքի համար յատկապէս պատրաստուած երկարաչունչ և գրական կամ զեղարուեստական շէքրանասիրական որոշ արժէք ունեցող ուսումնասիրութիւններ, առանձին պրակով հրատարակուէին՝ կազմելով ուրոյն մասնաշար մը:

Տաղանդաւոր Արքաղանք իբր առաջին փորձ, կը փափաքէր որ «Մի էջ Հայ Արուեստի և Մակոյթի Պատմութիւնից» ներկայ աշխատասիրութիւնը կազմէր Տաքևի Մատենաշարի առաջին թիւը:

Հայ արուեստի և մշակոյթի պատմութիւնը սիրողներէն անոնք որ պատեհութիւն չունեցան տեսնելու Տաքևի Երգ հատորը, ուր հրապարակ եկաւ ներկայ բանասիրականը, այդպիսիներու յարմար առիթ մը ընծայելու փափաքով կը հրատարակենք զայն, չնչին ծառայութիւն մը մատուցած ըլլալու գոհունակութեամբ:

Յառաջիկային առիթը պիտի ունենանք պարբերաբար զարգացնելու Տաքևի Մատենաշարը, Հայաստանի և արտասահմանի վաւազոյն գրողներու ուսումնասիրութիւններովը և առաջին պատեհութեամբ պիտի հրատարակենք Հայաստանի տաղանդաւոր գրագէտներէն Ալէքսանդր Արէլեանի թատերգութիւնը, «Արշակ Թագաւորի Սէրը»:

Հալէպ, 19 Սեպտ.

ԱՐՏԱՒԱԶԴ ՎԱՐԴԱՊԵՏ



ՄԻ ԷԶ

ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԻ ԵՒ ՄՇԱԿՈՅԹԻ ՊԱՏՍՈՒԹԻՒՆՆԵՑ.

Ա.

Ք Ր Ձ Ո Ւ Թ Ե Ա Ն, արուեստի մի կարեւոր մասն է ձեռագիրների կազմն ու նրանց զարդարանքը: Մեր մանր արուեստի (Kleinkunst) ոչ մի ճիւղը այնքան մնացորդներ չէ պահել, որչափ ձեռագիրների կազմը՝ քանդակագործութեան (մեծագրների վերայ), պատկերազարդութեան և օրնամենտի, ինչպէս և մշակույթի ուրիշ ճիւղերը նկատմամբ:

Կազմի ծաղունն ու զարգացումը կապուած էր մադաղաթի գործածութեան հետ. մադաղաթից առաջ գործադրուող պապիրուսը գլխաւորէ էր, անյարմար ծաղիւն. առաջ և փաթեթներ (Rolle) էին պատրաստում, միայն մի երեսի վերայ գրուած: Մադաղաթի գլխաւոր և կատարելագործութեամբ երեւան է գալիս գրքի ձեւը, գորտ հետ և կազմը:

Հնում տպարաններ չկային, որ մի անգամից հարկւրաւոր, հաղարաւոր գրքեր հրատարակէին, և ոչ էլ կատարելագործուած մեքենաներով գործարաններ, ուր հեշտութեամբ գրելու հարկաւոր նիւթը պատրաստուէր. ամեն ձեռագիր պատրաստուած էր մէկ մէկ հատ, անհատների երկարատեւ աշխատանքի հետ կապուած: Պէտք էր պատրաստել նախ մադաղաթը կենդանիների կաշուց, մաքրել մազերից, աւելորդ մասերից, հարթել, կտկել և յարմարեցնել գրելու համար. յատուկ մասնագէտներ զբաղուած

էին գորանով և քիչ ժամանակ ու աշխատանք չէր հարկաւոր գործը գլուխ բերելու: Աւելի յետոյ սկսուեցաւ թղթի գործածութիւնը. բայց նորա պատրաստութիւնն էլ ունէր իւր դժուարութիւնները. պէտք էր մօմել կամ նշտայել, կտկել և յարմարեցնել գրչութեան համար. որովհետեւ հնում պատրաստուած թղթերն այնպէս ողորկ չէին, գիւրին սահուն գրչութեան համար: Իսկ գրելը եւս առաւել դժուար էր, երկարատեւ ժամանակի և աշխատանքի գործ:

Գրիչներն իրենք երբեմն տեղեկութիւն են տալիս այդ մասին. Երուսաղեմի Հայոց մատենադարանի N 2588/33 բոլորգլխի աւետարանը, թղթի վերայ, Աստուածատու արեւդան աւարտել է քառասուն օրուայ ընթացքում. «Գրեցի զոր. զաւետարանս ջանիւք և բազում աշխատանաւք զաւուրս Խ. (քառասուն)»: ԲՃնեցի մի գրիչ Կիլիկիայի Ակնեւրի Վանքում երկաթագրից ընդօրինակել է մի Ազաթանգեղոս*, խոշոր բոլորգլխով, երկսիւն՝ իւրաքանչիւրը $23\frac{1}{2} \times 7$ սմ., ընդամենը $322\frac{1}{2}$ թերթից բաղկացած, $3\frac{1}{2}$ ամսուայ ընթացքում: Գէորգ Կամբոնացու աշակերտ Մարտիրոս Վարդապետը, նշանաւոր գրիչ, իւր գրած Աստուածաշնչի 185 ա. նշանակել է. «Ի մեծ թուականիս Հայոց ՉԾԲ (=1304) ի յամսեանն մայիս ըստ հռոմայեցւոց անուանց տմանց», որ աւր ժե. (15) էր սորին ամսոյ», իսկ 245 բ, «գրեցաւ սա ի Գռնեւո, ի թվականիս Հայոց յեւթն հարիւր յիսուն և երկուքն յուլիս Թ. (9)», ուրեմն 25 օրուայ ընթացքում գրել է, 60 թերթ: Որպէս զի ճիշդ դադարաւոր տանք աշխատանքի մասին, պէտք է աւելացնենք, որ գրուած է թղթի վերայ, բոլորգլխով, երկսիւն, իւրաքանչիւրը $22 \frac{1}{2} \times 6$ սմ. մեծութեամբ*: Ապա՝, որքա՞ն ժամանակ էր պէտք, որ գրիչն աւարտէր իւր Աստուածաշունչը բոլոր մասերով 735 թերթից բաղկացած. այս հանգամանքը բնականաբար թանգացնում էր ձեռագրի արժէքը և մատչելի չէր ամենքին:

*) Մատ. Էջմ. N 1481

**) Տես մեր Գրչութեան Արուեստը Գ. §117. Տախտ. ԿԶ.

Բայց աւելի թանգ էր նստում, երբ ձեռագիրը մտա-
ւոր պահանջներին բաւարարելուց զատ՝ դառնում էր ար-
ուեստի և շքեղութեան առարկայ, ոսկի կամ արծաթի
գրերով, նկարազարդուած շքեղ և գոյնզգոյն, պայծառ
պատկերներով և օրնամաններով։ Արքայական տան պատ-
կանող անձնաւորութիւններ, իշխաններ և բարձրաստիճան
հոգեւորականներ, նաեւ գեղարուեստասէր վանականներ և
աշխարհականներ իրենց պատուիրած մագաղաթի մատեան-
ները զարդարել էին տալիս մանրանկարներով, զարդերով,
երբեմն և աշխարհիկ բովանդակութեամբ, որ շատ և շատ
աւելի էր բարձրացնում ձեռագրի ծախսը։

Ներսէս անուշով մի վանական մեր միջնադարեան
«Համալսարան» Գրաձորում պատրաստել է տալիս մի Աստ-
ուածաշուէն 1332 թուին և իւր խի խօսքերով «հազիւ հազ
կարացար կտրել «գրելէ» (ալսինքն գրելավարձ) առանց ալ
խարճի ՌԾԾ (1500) դրամ», բայց նորից ստիպուած է լի-
նում վճարել ևս 300 դրամ։ Ամբողջ Աստուածաշուէնը խեղճ
Ներսէս վանականի վերայ 2200 դրամ է նստում, ըստ Ալի-
շանի 1350 Փր., իսկ ժամանակի արծաթի գնի համեմատ
4000 Փրանկ*։ Դոմինիկեան Յովհաննէս գրիչը պատրաստել
է մի Աստուածաշուէն, թղթի վերայ, լաւ գրչութեամբ,
375 թերթից բաղկացած, «և առի շուքրանա գրոցս, Բ. Ռ.
(2000) դահեկան... Թանկա Թարբէզի»։ Բազմաթիւ են ձե-
ռագիրներն կամ աշխատավարձի նշանակումներ, որոնք շատ
հետաքրքրական են, բայց բնականաբար երկարել չենք կա-
րող, նիւթից շատ չճշդուելու համար։

Ահա այսպիսի դժուարութիւններով և զոհողութիւննե-
րով ձեռք բերուած ձեռագիրը պէտք է ապահովուէր պահ-
պանութեան կողմից կազմով, որ դառնում է աշխուհե-
տեւ անհրաժեշտութիւն, իսկ փաթոյթը մնում է արքայա-
կան հրովարտական կամ եկեղեցական կոնդակներին համար։
Ժամանակի ընթացքում պահպանութեան պահանջի վերայ
աւելանում է գեղարուեստականը, շքեղութիւնը, մինչեւ իսկ
մոդան։

*) Հայապատում, 545։

Բ .

Այս համառօտ ակնարկից էլ պարզ պիտի լինի , որ գրչութեան արուեստի պատմութեան մէջ իւր ուրոյն և կարեւոր տեղը պիտի ունենար կազմարարութիւնը կամ գիրք կապիւտ արուեստը : Գրչութեան արուեստը մի բարդ երեւոյթ էր հաւաքական ոչխատանքի հետ կապուած . նորա պատմութեան մէջ իրենց բաժինն ունին ոչ միայն գրիչներն ու նկարիչները , մագաղաթ և գոյնզգոյն թանաք ու ներկեր պատրաստողները , այլ և կազմարարները : Հազուադէպ չեն ձեռագիրներին մէջ ստացողներն , գրիչներն և նկարիչներն հետ նաեւ կազմարարներին յիշատակութիւնը : Շատ յաճախ յիշուած է , օրինակ , Առաքել Հնազանդեաց ժԳ . դարու կէսերին , որպէս արքայական մատենաներին և ընտիր ձեռագիրներին կազմարար , նա է կազմել Լեւոն Գ . ի և Կեօան թագուհու չքեղ և թանկարժէք աւետարանը 1262 թուին : Նորա ուսուցիչն էր Սարգիս քահանայ* : Հազբատում 1243 թուին յիշուած է իւրեւ կազմարար «Պետրոս սպասաւոր սբ . նշանիս Հազբատայ» ,** Տաթեւի վանքում յաճախ Ալէքսանդոս արքայ ժԶ . դարու սկզբում Շմաւոն և Ստեփանոս եպիսկոպոսներն ժամանակ , եւն . :

Հետաքրքրական է լսել հներն կարծիքը ձեռագիրներն պահպանութեան մասին . գրիչները յաճախ իրենց յիշատակարաններին մէջ խրատներ են տալիս ձեռագրի խնամքով պահպանութեան նկատմամբ . օրինակ , Եկեղեաց գաւառի Աղի սուրբ Ստեփանոսի Սամուէլ գրիչը 1413 թուին գրում է . «Եւ ով սք հանգիպիք այսմ տառն , կարդալով կամ տեսանելով կամ գաղափարելով , նախախնամելով պահեսցէ զգիրքս և լաթով բռնեսցէ և մի իշխեսցէ ի գրոցէս պարագ թուղթ կտրել կամ ի յիշատակարանէս քերել և այլ անուն գրել» : Անէծք , ով կյանդգնի ծախել , գրաւ գնել , թուղթ կտրել կամ անպարկեշտ պահել*** : Մի ուրիշ գրիչ խնդրում է . «հոգ տանիք , լաւ պահէք զսուրբ աւետարանս

*Զեռ . Երուս . N 2660/105

**Զեռ . Էջմ . N 1890/1747 . 121ր .

***Զեռ . Էջմ . N 385/1317 , 536ր .

և ի հրոյ և ի տգիտաց ձեռք չի տալք, որ ապականեն զլուսանցսն և զծաշխիկն կամ զպատկերսն եւ կամ թուփ և պատկեր կտրեն եւ կամ խաչ փորելով զթուղթն ծակծկեն»։*

Պատուիրելով ձեռագիրները մաքուր պահել, խնամքով գործադրել, չվաճառել եւ գրաւ չգնել, կրակից ու խոնաւութիւնից պահել, սակայն չպէտք է «փակեալ կուռք» դարձնել։ Երզնկայի գրիչներէից մէկը 1446 թուին իւր գրած Յայտըմաւուրքի յիշատակարանում ասում է. «խիկ եկեղեցաւ պան եւ արեղայքդ Ս. Կիրակոսի Վանուցդ խնամ տարէք գրոցս, ի ժամանակի փախստեան կամ խռովութեան զգիրք ի քաղաքն տարէք եւ պահեցէք, եւ ի ժամանակի խաղաղութեան Վանքն տարէք եւ ընթերցիւք եւ մի աղխեալ եւ փակեալ պահէք, զի գիրք փակեալ կուռք են»։** Աւելին է ասում Մովսէս Երզնկացին, գրչութեան նշանաւոր վարժապետ Գէորգ Լամբրոնացու կամ Սկեււացու աշակերտներէից մէկը, ինքն էլ նշանաւոր գրիչ. նա Կիլիկիայում եղած ժամանակ, պանդխտութեան մէջ, աղքատութեամբ գրել է մի Աստուածաշունչ եւ հետը Երզնկա բերել, յիշատակարանի մէջ գրում է. «որ զաստուածաշունչս եւ կամ զայլ վարդապետական գրեանք, որ ի սուրբ Լուսաւորիչս կա, յաղագս յաշաղանաց խնայէ, որ ի շուրջ կա վանորայքդ գասատուն լինի (գալոց), եղիցի ընդ անիծիւք իւրեւ զայն ծառայն, որ թաքոյց զարծաթ տեսուն իւրոյ եւ իւրեւ զայն, որ ինքեանք ոչ մտին, եւ որ մտանէին, չչտային թոյլ մտանել, եւ զայն անէծս ժառանգեսցեն. եւ ապա որ կարգասցէ և խնամով պահեսցէ. այս բաւական է, զի զէնն զինաւորինն է, եւ կատարողքն աւրհնեալ, ամէն»։*** Մինչեւ իսկ երգիծաբանութիւններ կան գրուած չայսինքնի գէմ, որոնք ձեռագիրը պինդ փակում են եւ ուրիշին չեն տալիս օգտուելու, իրենք էլ անկարող լինելով օգտուելու. «տառնաւոր ի վարդանէս վարդապետէ ասացեալ վասն ումեմն մեծատան, որ ունէր քարոզգիրք եւ մեկնիչ արարածոց

*Մրուանձտեանց. Թորոս Ախպար, Բ. Կ. Պօլիս. եր. 418.

**Անդ. 297

***Ձեռ. Էջմ. 153/177, 608բ—609ա

ասկիապատ եւ գեղեցիկ, որ չգիտէր գիր եւ ոչ կարդալ եւ ոչ տար այլոց» :* Ո՞նք Առաքել երէց 1689 թուին գրել է մի աւետարան, աստուածաշունչ եւ ճաշոց իւր զաւակների համար. աւետարանի յիշատակարանի մէջ խնդրում է յիշել «եւ զքոյրն իմ զՎուհարն եւ զորդի նորա գտէր Պաւլոսն, որ գանս սաստիկս էարբ ի ձեռաց իմոց ի վարժեն գրոց» իսկ իւր երկու որդիներն համար, թէ «Տէր ողորմեա եւ զՀամբարձի ասելով աւանդեցին զհոգիս իւրեանց մանուկ տիաւք . . . » : Կենդանի զաւակներին պատուիրում է աւետարանը, աստուածաշունչը եւ ճաշոցը «մի՛ վաճառել արծաթով, այլ ձրի մնալ ի ձեռս ընթերցողաց», կամ յիշատակ դնել մի յարմար եկեղեցում :**

Գ .


Գիրքը գրւում էր մաս մաս, մագաղաթի եւ գրքի մեծութեան համեմատ, չորս եւ աւելի թերթերից բաղկացած . այդպիսի մասերը կոչւում էին րէսսա, րէսսասիոն տետր, որ անցել է և հայերէնին. նոցանից լւրաքանչիւրը կարող էր մտքի կողմից մի ամբողջութիւն լինել, կամ բազմաթիւ այդպիսի տետրեր կցւում էին իրար իրբեւ մասեր ամբողջութեան և մատեան, գիրք կազմում : Հնում գրքերը երեսներով չէին թուահամարում, այլ տետրակներով . ա . ր . գ . եւն գնում էին ներքեւի լուսանցքում տետրների առաջին երեսների վերայ, ութերորդ, տասներկու կամ տասնվեցերորդ երեսներին, նայելով մագաղաթի և տետրակների մեծութեան : Երբ տետրակները գրւում էին և պատրաստւում, կազմարարը այդ տետրակներն իրար էր կապում կամ կարում, ինչպէս այժմ մամուլները, այդ պատճառով էլ կապ և կապիլ բառն է գործադրւում երբեմն կազմ և կազմել բառերի փոխարէն :

Կազմարարութիւնը զարգանում է երկու տեսակետով, իւրեւ պահպանութեան միջոց և իւրեւ արուեստ . ձեռագիրներն թանգութեան պատճառով, ինչպէս տեսանք, պէտք էր այնպէս կազմել, որ կարճ ժամանակի մէջ չփչանար, երկու կողերը սովորաբար տախտակից, մէջքի հետ կաշով

*Ձեռ. էջմ. 5081

**Սրուանձտ'ս նց. Թորոս Ախպար 372

կամ սէկով պատած : Աղթամարի Գրիգոր գրիչ քահանան
 ի միջի այսոց խնդրում է յիշել և «գգըբաղն», որ զաւետա-
 րանի սեկն ետուր, «սրովհետեւ այդ նիւթն էլ նշանակու-
 թիւն ունէր պնդութեան և արտաքին վայելչութեան հա-
 մար : Տախտակի փոխարէն, երբեմն դորժադրում էին նաև
 մագաղաթի և թղթի կտորնոր, հին ձեռագիրներն մասեր,
 որ իրենց համար անպէտք էր թւում, իսկ ներսից ծաղկաւոր



Պատկ. 1.- Կազմի ներսից կտաւ (հնգկական), ձեռ. էջմ. N 230

կտաւով (պատկ. 1) շատ անգամ նոյն իսկ աղնիւ մետաքսի
 ոսկեթիւ և ծաղկեայ կամ պատկերաւոր կտորներով ծած-
 կում, որ հնագիտական արժէք են ներկայացնում : Նրանց
 հաւաքումն ու դաշնադարձ հրատարակութիւնը ահագին
 նիւթ կտար արուեստի և մշակոյթի, արհեստագիտական և
 վաճառականական խնդիրներն և փոխյարաբերութեանց

լուսաբանութեան համար* : Ձեռագիրները մանրանկարներն ու զարդերն եւս չփչանալու համար՝ թերթերի մէջ գնում էին մետաքսի, փափուկ կտորներ, որ նոյնպէս արժէքաւոր են : Կաշին զարդարում էին զլուծամբը՝ կամ




Պատկ. 3 - Կաշեկազմ. Եսայի Նչեցու
Աստուածաշնչի (1118 ?) առաջին երես :

ճնշամբ օրն՝
նամենտներով
(պատկ. 3, 4.),
երբեմն շատ գե-
ղեցիկ, վերան-
ապում պատ-
կերներ, ստացո-
ղի, կաղմողի
անունը, թուա-
կանը. կաղմը
ունէր եւ բաց-
ուածքի ծած-
կով, նոյնպէս
զարդարուն
(պատկ. 5.) որ
կապիչներով փա-
կում էին ամ-
բողջ գիրքը
(պատկ. 2.) : Ճրն-
շումով յառաջ
բերած օրնա-
մենտները փո-
խարէն, երբեմն
նկարում էին

*Ուրախալի է, որ Երեւանի Պետական թանգարանի վարիչնե-
րից՝ Ե. Շահազիլը և նկարիչ Ոսիկեան իսկել են այդպիսի կտոր-
ների գունաւոր աւրոմ պատրաստել :

ժրվներանգ գոյներով: Կաշէպատ եւ օրնամենտներով զարդարուն կազմը ունէր երբեմն եւ շապիկ, հասարակ կամ սղնիւ կտորներէց կամ ասեղներգործ, որ համամատարար աւելի քիչ են հասած մեզ:



Պատկ. 4.- Աստուածաշունչ
նսայի նշեցու երկրորդ երես.

Աստուածաշունչ է*, զբուած մասամբ Յակօր գրչի և մասամբ Սարգիս քնչյ, Պրծակի կողմից՝ որ նկարագարւողն

Կաշէպատ հնա-
գոյն կազմերից
յիշիկ կարող ենք
երեքը. առաջինը
մի մեծադիր
Տօնապատճառ ,
«Ի. ՈՒ» (=1191)
թվ. հայոց կազ-
մեցու տաւնա-
պատճառս այս
արդեամբ Յաւը-
կայ աղախնոյ
Ք. ի. . . » : Կազմի
առաջին երեսին
շէշ գրչին մօտ
բոլորգրով գրող-
մուած է. «Փի-
լիպպոսի է. զԱ-
կօր յիշեայ ի
Քս. » : Փիլիպ-
պոսը գրիչն է եւ
ստացողը, իսկ
Ակօրը կազ-
մարարն է* :

Երկրորդը մի

*Տես մեր Գրչութեան Արուեստը Դ. 1913 թ 65.

**Անդ. թ 89.

է, 1338 թուին .
ստացողն է Յակոբ
Կաթուղիկոս Տար-
սոնացի (1327 —
1340 և 1356 —
1360), Կազմողը
Յովհաննէս սար-
կաւագ . թէեւ
Կազմի վերայ
գրութիւն կամ
թուական չկայ,
բայց բոլոր տը-
եալներէն պարզ
է որ սկզբնական
Կազմն է, գրչու-
թեան ժամանա-
կից: Այստեղ
երկրաչափական
օրնամենտներէն
աւելի ուշագրու-
թեան արժանի
են գործուած
Վաղինները ի-
րենց սրածայր
վահանիկներով
և նրանց վերայ
քանդակուած
առիւծներով




Պատկ. 5.- Բերանակալ Նչեցու Աստուածաշնչի

(պատկ. 2): Աստուածաշունչը իւր ընտիր մագաղաթով,
ազնիւ գրչութեան և մանրանկարների հետ, որոնց մէջ յատ-
կապէս ստացող Կաթուղիկոսի և Սարգիս Պիծակի պատկեր-
ները, արժէք է ստանում նաև Կազմով և դորա հետ կապ-
ուած մանրամասնութիւններով: Էջմիածնի մատենադա-

բանին նուէր է բնի ալ ընտիր ձեռագիրը Գէորգ Դ. կաթողիկոսի քոյս տիւրին եւղինէն:

Երբորդի համար չունինք հաստատուն փաստեր, թէ գրչութեան ժամանակից է, լայց ձեռագրի լաւ պահպանութիւնը եւ կազմի ամբողջութիւնը, որպէս հետեւանք տիրոջ գնահատութեան եւ թանգ արժէքին, հաւանական է դարձ-



Պատկ. 2.- Կաշէկաւ՝ Ստորաժաշնէի, Յակոբ Բ. Տարսնեցու
Ձեռ. ԼՂԺ. Դ.ց. N 359.

նում այն: Այդ մի Աստուածաշունչ է դարձեալ, մեր միջ-
նադարեան ամենից նշանաւոր Գլածորի գպրոցի գործ, մի
խակեան գլուխ գործոց ժամանակի գրչութեան եւ մանրա-
նկարչական արուեստի, պատրաստուած իւր լուսադոյն աշա-
կերտների կողմից Եսայի Նէհեու համար, որ նոյն գպրո-
ցի ամենափայլուն շրջանի երկարամեայ ղեկավարն էր, գլու-
խաւոր ուսուցչապետը: Կիրակոս Երզնկացի, նորա եզ-
բօրորդին Յովհաննէս Երզնկացի որ եւ Մործորեցի
նշանաւոր գրիչն ու մատենագիրը, Թորոս Տարոնեցի
բազմաշխատ մանրանկարիչը եւն. իրենց արուեստի
լաւագոյն բաժինը նուէր են բերել ժամանակի մեծ վար-
դապետին: Այսպիսի մի ձեռագիր պէտք է, եթէ ոչ թանգա-
գին, որ վարդապետի կարողութիւնից վեր էր, բայց վայե-
լուչ եւ պինդ կազմով ապահովուէր երկար ժամանակի հա-
մար. մենք կարծում ենք ձեռագիրը իւր առաջին կազմով,
1318թուից, հասել է մեր ձեռքը*:

Առաջին երեսը գեղեցիկ խաչ է ասորի ճանաւոր պատ-
ուանդանի վերայ (պատկ. 3), շրջանակի մէջ առնուած.
մօտիւր երկու իրար կտրող գծերի ոլորապտելոյ, գծերի
հանդիպման տեղում գնդակով, որ շատ սիրելի էր, յաճախ
գործադրուած կազմերի վերայ, եւ մէկը ճարտարապետա-
կան հնագոյն զարդարանքներից: Միւս երեսը երկրաչափա-
կան զարդ է, երկու քառանկիւններ իրար հապտած եւ
նրանց կողերից զոյգ զոյգ ձուածեւներ սուր ծայրով դէպի
կեդրոնը դարձրած: Կեդրոնի շուրջը մի օղակ՝ հազարած քա-
ռանկիւններին եւ զոյգ սրտաձեւերին՝ կապում է իրար:
Ամբողջն էլ առնուած բարակ գծով բոլորակի մէջ: Արտա-
քին շրջանակի մօտիւր նոյն է առաջին երեսի հետ (պատկ.
4): Կազմը ունի եւ բացուածքի բերանակալ, երկրաչափա-
կան գեղեցիկ օրնամենտներով զարդարուն (պատկ. 5),
եռանկիւնի գծական շրջանակի մէջ առնուած. մեծ ութիւնն
է $26 \times 19 \times 9$ սմ.***:

*Ձեռագրի մասին տես մեր Գրչութեան Արուեստը Գ. § 123—124 և
էջմ — մատ. N182/206 (Կարլնեան N 176):

**Լուսանկարի արտադրութեան մէջ տարաբաղդաբար միայն
զարդարանքի մասն է արտատպուած եւ ոչ կազմի ամբողջ երես-
ները:

Դ.

Փեղարուեստական տեսակէտով աւելի արժէք են բերում ազնիւ նիւթերից շինուած կազմերը, համակ փղոսկրից, ոսկուց, արծաթից, քանդակներով, պատկերներով կամ կիտուածանկարներով (email) ծածկուած, երբեմն էլ ընդհուլուած մարդարիտներով և թանգարժէք քարերով:

Փեղարուեստական կազմերի գործածութիւնը անցել է քրիստոնէական գրքերին հեթանոսութեան ժամանակի դիւտիկներից (sintula) կամ պնակիտներից. պապիրուսի, մագաղաթի, փայտի կամ մետաղի երկու եւ աւելի օգտւում իրար կցուած թերթերից կամ տախտակներից, ներսի երեսները մոմով պատած, որոնց վերայ գրում էին երկաթի ձողիկներով կամ եղեգնեայ գրչով: Պնակիտները մեր ներկայ քարետախտակների գերն էին կատարում դպրոցականների համար, բայց գործածական նաեւ սովորական նամակագրութիւնների, յիշատակարանների կամ նկատողութիւնների համար: Նրանց արտաքին երեսները, երբեմն, շինւում էին թանգազին մետաղներից, փղսկրից եւ զարդարում քանդակներով և մարգիւսի պատկերներով, որպէս շնորհաւորութիւնների նուէրներ: Հռոմում սովորական էր դարձած այգալիտի նուէրներ տալ բարձրատիճան մարդկանց, նրանց նոր պաշտօնի մէջ մտնելու կամ նոր տարուայ չլնորհաւորութիւնների առթիւ, որոնցից մի քանիսը Ն. դարի սկզբից հասել են մեզ: Այգալիտի հետեւողութեամբ սովորական է գտնուում նաեւ քրիստոնէական սրբազան եւ պաշտամունքի գրքերը զարդարել Յիսուսի, առաքեալների եւ սուրբերի պատկերներով կամ հին ու նոր կտակարանի հետ կապուած տեսարաններով:

Մեր մէջ այգալիտի թանգազին նիւթերից պատրաստւած եւ պատկերներով զարդարուած կազմերի մասին յիշատակութիւն ունինք արդէն Զ. դարու վերջերից կամ Է. դարի սկզբից, վրդանէս քերդուլի Յաղագս պատկերամարտից աշխատութեան մէջ: Հ. Տաշեանը կասկած է յայտնել նորավաւերականութեան մասին, համարելով այն Ը. դարու գործ. բայց մենք համոզուած ենք, որ վաւերական է այն և վերոյիշեալ վարդապետի գրուածքն է. սակայն տեղը

չէ աշտուղ մամբամանի ալդ խնդիրը . բաւական է յիշել թէ՛ արուեստն ու արծարծուած խնդիրները համապատասխան են՝ Վրդանէս քերդողի ժամանակին և թէ՛ ալդ գրութեան մի հատուածն ունինք մեր Ժ. դարու ձեռագիրներէից մէկը՝ մէջ*, ուրիշ հնագոյն գրուածքներէ և թարգմանութիւններէ չարքում:

Ահա նորա խօսքերը մեզ հետաքրքրող հարցի մասին . «Քանզի և զտխս աւետարանին տեսանեմք նկարեալս ոչ միայն յսկւոյ և յարծաթոյ, այլև յսկերաց վիշաց եւ կարմիր մարթով կազմեալ . եւ մեք յորժամ երկիրպագանեմք սրբոյ աւետարանի կամ համբուրեմք, ոչ թէ վիզին ոսկերաց մատուցանեմք գերկրպագութիւն կամ լաքալին, որ յերկրէ բարբարոսացն եկեալ է ի վաճառ, այլ բանին Փրկչին, որ ի մագաղաթին գրեալ է» : Տարաբաղգաբար այսպէս հին ժամանակից հայ արուեստագործներէ գործեր չեն հասել մեր ձեռքը, թէպէտ այս վկայութիւնը, ինչպէս և Յիսուսի հին պատկերաքանդակները ձեռքին կազմած աւետարանով (Ամենակալ) և այլ հին ու նոր կտակարաններից տեսարաններ, որոց պատկերաքանդակներ, որ մենք ունինք տաճարների և մանաւանդ գերեզմանական կոթողների վերայ մինչ է . դար, ապացոյց են, որ անհնարին չէին ալդպիսիները նաեւ կազմերի վերայ :

Ճիշդ է, հայ արուեստը արեւելեան ուրիշ ազգերի հետ չի սիրում մարմնաւորել մարդկային պատկերն այնպէս, ինչպէս յունական արուեստը, բայց ալդ հնագոյն կոթողներից գտնելով, որոնք գեռ ևս մատչելի չեն դարձած գիւտութեան եւ մեծ աղերս են յայտնաբերում սասանեան եւ ասորա — միջագետական արուեստների հետ, այնպէս յետ չի մղուած կերպարուեստը ալդ շրջանում, ինչպէս յետ պատկերամարտական կամ արաբական ժամանակներում : Այդպիսի քանդակների յաճախութիւնն ու բազմապիսութիւնը մեր արուեստի մէջ մինչ է . դար կողմնակի հաստատութիւն է Վրդանէս քերդողի կազմերի եւ ընդհանրապէս

ապատկերադրութեան մասին տուած միւս տեղեկութիւններէն, թողնենք ասելու, որ փղոսկրի կազմերի կամ քանդակները մնացորդներ քրիստոնէական ծագմամբ հասել են մեզ ուրիշ ազգերից, եւ հենց դրանցից մէկն էլ գտնուում է Էջմիածնի մատենադարանում, որի մասին քիչ յետոյ խօսք կ'լինի:

Մեր երկրի և ժողովրդի ապարադ պայմանների հետ կապուած երեւոյթ է այս, որ սոհասարակ արուեստի և մշակոյթի հնագոյն և թանգարժէք մնացորդներ քիչ են հասել մեր ձեռքը. պատերազմների և բարբարոս ազգերի արշաւանքների հետեւանքով յափշտակուել են կամ կորուստեան մատնուել ինչ որ նիւթական սրժէք ունէր և հեշտ էր տեղափոխել: Ըստ՝ Օրբէլեանի Սիւնեաց թագաւորութեան անկման ժամանակ, Սելջուկեանների ձեռքով կապանի բերդի գրաւման հետ՝ ոչնչացել են 10,000ի չափ ձեռագիրներ, թուի մէջ չափազանցութիւն ընդունելով հանդերձ, բնորոշ է տեղեկութիւնը: Անիի երկարամեայ պեղումները ակադեմիկ Մառի ղեկավարութեամբ մշակոյթի և շքեղութեան այսպիսի մնացորդների կոյմից շատ աղքատ արդիւնք ունեցան՝ եթէ չհաշուենք յախճապակեայ անօթների կտորները, ապացոյց քաղաքի կողոպտման և աղքատացման՝ կործանուելուց և անմարդաբնակ դառնալուց առաջ՝ Կարելի⁶ է չափել եւ կշռել մեր անցեալ ստեղծագործութեան մնացորդները, ինչպէս եւ բուն ժողովրդական արուեստի, մշակոյթի այն ահաւոր կորուստը, որ ունեցանք մենք այս վերջին պատերազմի հետեւանքով: Սզգադրական Հայաստանը, աւա՛ղ, իւր լաւագոյն մասով ոչնչացաւ, իսկ ազգագրութիւնը ընդարձակ իմաստով իւրաքանչիւր ազգի նոր արուեստի եւ ստեղծագործութեան էական եւ կենդանի աղբիւրներից մէկն է:

Դառնալով կրկին մեզ զբաղեցնող խնդրին, պիտի ասենք ոչ միայն այդպիսի կազմեր չեն հասել մեզ հին ժամանակից, այլ նոյնիսկ թուականով ձեռագիրներ չունինք թ. եւ ժ. դարերից առաջ: Սակայն հազուադիւր չեն թանգարժէք, գեղարուեստական կազմերի յիշատակութիւնները մեր մա-

տենագրութեան, յիշատակարանների կամ արձանագրութիւնների մէջ՝ թէեւ ոչ շատ հնագոյն շրջաններից: Էջմիածնի մատենադարանի N 311 ձեռագիր աւետարանը, սքանչելի միջին երկաթագրով գրուած եւ նկարազարդուած 1066 թուին Ակոռեցի Գրիգոր երէցի ձեռքով Սեբաստիայում, ուր գաղթել էր Վասպուրականի Սենեքերիմ թագաւորի հետ, մօտաւորապէս հարիւր տարի յետոյ Ներսէս Շնորհալու սեպհականութիւնն էր, որ նուիրեց իւր եղբորորդի Գրիգոր Զ. Ապիրատին: Սա էլ նորոգել է տալիս «զածային աւետարանս գեղեցիկ մետաքսէլուք եւ ակամբք պատուականաւք, ընդելուզեալ ի մարգարտոյ մեծագնոյ ի ձեռն ամբարնական վարդապետի Ստեփանոսի գրան սարկաւազի տն իմում (այսինքն Ներսէս Շնորհալու)»:

*Սմբատ Գունդստապլը պատմում է Յովհաննէս մեծաբարոյ կաթողիկոսի մասին, թէ Հռոմկան ամբացնելու համար «քակեց զոսկիակազմ տուփ աւետարանին տէր Գրիգորիսի, որ էր ակամբ եւ մարգարտով զարդարեալ»: ** Արդեօք այս երկու տեղեկութիւնն էլ այն աւետարանին են վերաբերում, թէ Սմբատի յիշած տէր Գրիգորիսը մէկն է Գրիգոր — Ապիրատի նախորդներից: Հասկանալի է, որ այստեղ հետաքրքրականը թանգարժէք նիւթը չէ, այլ որ այդ նիւթը գործադրուած է գեղարուեստական նպատակի համար***:

*Տես մեր յօդուածը՝ «Նախնեաց Յիշատակներ», Արարատ 1910. 81:

**Սմբատ Պատմիչ. 1856. 104-105

*** (Ժէ-ԺԼ. դարերից մեր ձեռքը հասած ասեղնագործ եպիսկոպոսական կամ հայրապետական թագեր, վականներ կամ եմիփոթոններ կան մարգարիտներով եւ քարերով այնպէս ընդելուզուած, որ պատկերների հետ ամբողջութիւն են կազմում եւ աւելի բարձրացնում գեղարուեստական տպաւորութիւնը: Մանր արուեստի այս ձիւղին եւ ընդհանրապէս եկեղեցական ասեղնագործութեան մասին մի այլ անգամ, յոյս ունինք, ամբողջական մի յօդուած նուիրելու)

Կոստանդին Կաթողիկոս Բարձրբերդցու եղբորորդին թորոս քահանայ՝ 1262 թ. գրել և ճոխ նկարագրել է տուել Հռոմիկլայում մի աւետարան, ըստ յիշատակարանի արտաքուստ «ընդեղուզեալ քարամբք»։ Աւետարանը տեսել ենք և ուսումնասիրել Սեբաստիայի Ս. Նշան վանքում։

Վաչուտեան իշխանութեան հիմնադիր Սարգսի որդի Վաչէն Սանահնի վանքի մի անթուական արձանագրութեան համեմատ նուիրում է ոսկետուփ աւետարան* . 1235 թուին սոյն Վաչէի որդի Գուրգ իշխանը և իւր ամուսինը Խորիշահ Մամիկոնեան Սաղմոսավանքի զբառունն են շինում և ի միջի ալլոց նուիրում նաեւ մի ոսկետուփ աւետարան** ։

Գրիգոր երէց որդի Մանգիկ երիցու 1262 թուին Բագնալի Ս. Աստուածածնին նուիրել է «մի տաւեական մագաղաթ, մի աւետարան, ոսկետուփ իմ գանձով գնած»։*** Քաջբերունեաց երկրից Կարապետ սին արքունի Տիվան պաշի 1314 թուին գնալով Իտալիայի Պերուճիա քաղաքը, գրել է տուել այնտեղ մի պատուական աւետարան «ոսկի կողօք և նուիրել է Աստուածածնի երեքսորան եկեղեցուն։ 1)։

Կոստանդին Բ. թագաւորը 1345 թուին, իւր իսկ յիշատակարանի համեմատ, ստանում է մի աւետարան, «որ է կազմեալ արծաթեղէն և ոսկեղէն, նկարակերպ գեղեցկութեամբ զարդարեալ», յիշատակ «ամենայն զարմից իմոց և հօրն իմոյ տէր Պաղտին մարաջախտուն հանգուցելոյն առ Քրիստոս, ալլ և վասն յերկար կենդանութեան մերոյ և աստուածապարգև որդւոցն իմոց Օհնի և Լէոնի։ 2)

* Սանահնի արձանագր. գրի առնուած մեր կողմից. համ. Ջալալեան. Ա. 24.

** Սաղմոսավանքի արձ. գրի առնուած մեր կողմից. համ. Ալիշան. Այբարատ. 163:

*** Ալիշան. Շիրակ. 119:

1) Ալիշան. Սիսուան. 520:

2) Փիրղալէմեան. Նշմարք Հայոց Պատմ. անտիպ յիշատ. թիւ 99:

Հաբջոննց Կիրակոս երէց Բաղիշեցին 1487 թուին նուէր է տալիս «ի գուռն ս. Յակոբին... որ է ի Կապուտգեղ» մի աւետարան «ոսկի խաչով և արծաթ հագներով և կոճակով և նխշուն տփով և զշորով»*: Խոջայ Սաֆար ոմն Ռէ (=1621) թուին վերստին ստանում է 1321 թուին Գլաձորում Կիւրիոն գրչի ձեռքով գրուած աւետարանը և զարդարում ոսկով և ակներով**։ Երբեմն էլ յիշում են արուեստաւորներ ի անունները. 1290 թուին գրուած և մանրանկարչու թեամբ զարդարուած մի աւետարան կոստղել է Կոստանդին ոսկերիչ ՁՅԵ=1296 թուին***։

Եւ այսպէս ամեն դարից կարելի է տասնեակներով յիշատակութիւններ բերել ոսկեառուփ կամ արծաթի կազմերի և կազմարարների ու ոսկերիչ արուեստաւորների մասին. բայց բաւական համարենք և անցնենք մի քանի իրական մնացորդների նկարագրութեան և հնագիտական-գեղարուեստական գնահատման, որոնց լուսանկարները տալիս ենք սոյն յօդուածում։ (1

Ե.

Նախընթաց պրակի մէջ յիշատակեցինք Էջմիածնի (այժմ պետականացած) մատենադարանի փղոսկրի կազմի մասին, մեզ մօտ պահուած մանր արուեստի ամենամեծ հնութիւններէ մէկը, բայց օտար ծագմամբ (պատկ. 6 և 7)։ Ե՞րբ է կցուած այդ կազմը հայ ձեռագրին, որ Ժ. դարու (989 թ.) աւետարան է 2) և հայ գրչութեան ու ման-

* Լաւայիան, Ֆուցակ վասպուրականի Ձեռագրաց. 1915. 116։

** Տարաբազդաբար ձեռագրի N.ը այժմ ձեռքի տակ չունինք։

*** Էջմ. Մատ. Ձեռ. N 2630։

1) Մինչ այսօրեղ արծարծուած մտքերն ու փաստերը քաղուած են մեր «Գրչութեան Արուեստը», մասն Ա. անտիպ աշխատութեան կազմի վերաբերեալ գլխից։

2) Տես մեր Գրչութեան Արուեստը Գ. § 41։ Կազմի և մանրանկարչութեան մասին աշխատանք ունի Strzygowski-ն. *Das Edschmiadzin Evangeliaaz*. Հայերէն թարգմանութիւնը՝ Էջմ. աւետարանը, Վիեննա. 1892։ Ֆրանսիացի գիտնական Մակլէրը նոյնատիպ հրատարակել է այս աւետարանը, տարաբազդաբար ձեռքի տակ չունինք։


ըմբռնող թեման ամենակարևոր և հնազոյն մնացորդներից մեկը, անյայտ է:



Պատկ. 6.- Փղոսկրի կազմ. ձև. էջմ. N 229/2374 ա. երես:

Ձեռագիրը 1173 թուից գտնվում էր Մաղարդայ Ս. Սանփանոսի վանքում և միայն ժ.թ. դարում կեսերին Մաղար կաթողիկոսի ձեռքով, եպիսկոպոս եղած ժամանակ, բերված էլ միաժին: Ոչ գրչու թեման, ոչ 1173 թուի և ոչ վերջին յիշատակարանի մեջ, որ անթուական է և կարող է ժ.թ. — ժ.ե. դարում գտնվել, յիշատակվելիս կայ այս

կազմի մասին . բայց չի շատակութիւնն՝ չկայ առ հասարակ
կրկին կազմելու կամ նորոգելու մասին :



Պատկ. 7.- Փղոսկրի կազմ. ձեռ. էջմ. N 229/2374 ք. Երես :

Ձ. զարկեց մնացել են ոչ սակաւաթիւ փղոսկրից , քան-
դակներով զարդարուած դիպչիխներ կամ կազմի տախտակ-
ներ , որ պահուած են այլ և այլ թանգարաններում . դե-
ղարուեստական-հնագիտական բարձր արժէքով . այդ շրջա-
նին է պատկանում և նրանցից մի քանիսին մեծ նմանու-
թիւն ունի և մեր կազմը , ոչ միայն արուեստի ընդհա-
նուր ոճով , այլ և նոյն իսկ արտաքին ձեւի կազմութեամբ :

և մասամբ պատկերներն բովանդակութեամբ : Մեր կազմի երեսները բաղկացած են հինգ հինգ կտորներից , երեքը միջին մասում և մէկ մէկ վերելից և ներքեւից , աւելի երկար , քան միւսները . ճիշդ նոյն հնգամասնեայ արտաքին կազմութիւնն ունին Բազեննայում , Վատիկանում և Փարիզի Ազգային մատենադարանում պահուող տախտակները , իսկ վերելի երկարաւուն կտորների պատկերագրութիւնը՝ սաւառնող և թւաւոր հրեշտակները պսակի մէջ հաւասարակող խաչով և վերելի անկիւնների թագազարդ պատկերներով յար և նման Բազեննայի և Վատիկանի տախտակներին , մոզերի երկրպագութիւնը (պատկ . 6) նման Վատիկանի տախտակին ևն : Ինչպէս վերոյիշեալները , այնպէս և մեր կազմը Զ . դարու Բիւզանդական - Բազեննական գործեր , ռնով և արուեստով նման Միլանի մայր եկեղեցում պահուած Մաքսիմին եպիսկոպոսի աթոռին , որ ներկայ գիտութեան մէջ արդէն տիրապետութիւն ձեռք բերած հայեացքով , ասորական , մասամբ և եգիպտական , ազգեցութիւն են կրում , ինչպէս և առհասարակ Բազեննական ճարտարապետութիւնն ու խճապատկերների արուեստը * :

Կազմի տախտակների մեծութիւնն է $36\frac{1}{2} \times 29\frac{1}{2}$ սմ . , իւրաքանչիւրը հինգ կտորից բաղկացած , բայց եօթ եօթ տեսարանով : Առաջին երեսի (պատկ . 6) կեդրոնական խումբը Աստուածածինն է նստած աթոռի վերայ , մանուկ Յիսուսը ձախ թեւին , իսկ յետեւից կանգնած են երկու հրեշտակներ գաւազանները ձեռքներին : Աջ կողմի կտորը երկու տեսարան ունի , վերեւ աւետումն է , ներքեւ Մարիամի փորձութիւնը մանկութեան աւետարանի համաձայն , իսկ ձախ կողմից վերեւ ծնունդն է , ներքեւ եգիպտոս փախչիլը : Վերելի երկար կտորը՝ սաւառնող հրեշտակները

* Այս հայեացքի յայտնի ախոյեանն է վիեննայի նշանաւոր արուեստագէտ Josef Strzygowski-ն , մանաւանդ իւր վերջին աշխատութիւնների մէջ , բայց նաև ֆրանսիացի գիտնական Charles Diehl և ուրիշները :

բռնել են պսակի մէջ դրուած հաւասարակող խաչը, որ նոյնանում է Քրիստոսի անձի հետ, ուրիշ նման պատկերաքանդակներում, ինչպէս մեր Պտղափանքի քանդակն է Զ. դարից, ասորա-միջագետական հոսանքի հետ կապուած: Անկիւններում մի մի թագազարդ Ֆիգուրներ, ձեռքերը պաշտաման արտայայտութեամբ, որ հաւանօրէն Դաւիթ և Սողոմոն: Ներքեւի երկար կտորը մոգերի երկրպագութիւնն է:

Երկրորդ երեսի (պատկ. 7) վերին կտորը կրկնութիւն է առաջին երեսի վերին կտորի քանդակին. իսկ կեդրոնում Յիսուսն է, յետեւից Պետրոս և Պօղոս առաքեալներով. աջից վերեւի տեսարանը տեւատես կնո՞յ բժշկութիւնը, ներքեւը Սելովմա աւագանի անդամալոյծի բժշկութիւնը, ձախից վերեւ՝ անդամալոյծի բժշկութիւնը՝ «առ զմահի՞նս քո և երթի տուն քո» խօսքի համեմատ, ներքեւ երկու դիւահարները բժշկութիւնը: Ներքեւի երկար կտորը երթն է դէպի Երուսաղէմ: Մենք մանրամասնութիւնների և հնագիտական վերլուծութեան մէջ չենք մտնում իբրեւ ծագումով ոչ հայկական արուեստի գործ:

Զ.

Մեզ յայտնի գեղարուեստական և հնագոյն գործը թանգազին մետաղից Ն. Նախիջեւանի Լուսաւորիչ եկեղեցու մի աւետարանի կազմն է որ ձեռագրի հետ բերուած է Քրիմի Կաֆայ (Թէոդոսիա) քաղաքից գաղթելու ժամանակ, իսկ այնտեղ ընկել է Կիլիկիայից, ժամանակն անյայտ, բայց 1621 թուից առաջ, երբ նորից կազմուել է Կաֆայում: Այժմ գտնուում է Երեւանի թանգարանում՝ N 84:

Յիշատակարանից իմանում ենք, որ գրուած է «Կիւր = Կիւրակոս» գրչի ձեռքով, «յաշխարհամուտաթոռս Հոռմկըլա», «ի թագաւորութեան Հայոց Հեթմոյ բարեպաշտի, և որդւոց նորա... Լեւոնի և Թորոսի. և սրբահոգի թագուհոյ իւրոյ Զապէլի», ՌՂԸ=1249 թուին, «հրամանաւ և ծախիւք սուրբ և երջանիկ Կաթուղիկոսիս Հայոց տն Կոստանդեա»: Աւետարանի նիւթը ընտիր և փափուկ մազա-

ղաթ է, բայց ոչ շատ նուրբ, գեղեցիկ բոլորգիր և զարդարուած մանրանկարներով, որոնցից ամենից արժէքաւորը Լեւոն Գ-ի պատանեկութեան պատկերն է :

Խնչպէս է աւետարանը անցել Լեւոն թագաժառանգին, չգիտենք. գեւ ևս ՁԴ=1255 թուին, երբ արժաթապատկազմով զարդարուեց Կոստանդին Կաթողիկոսի հրամանով, Լեւոնի մասին յիշատակութիւն չկայ. սակայն արքայորդու պատկերը այդ աւետարանի մէջ ապացոյց կարելի էր համարել, թէ Կոստանդին Կաթողիկոսը պատրաստել է տուել յատուկ նորա համար, եթէ նոյն լինին ձեռագրի և այս մանրանկարի արուեստը, որ տարարազգաբար այժմ քննութեան ենթարկելու հնարաւորութիւն չունինք* : Յամենայն դէպս աւետարանը արքայորդուն պէտք է ընծայուած լինի, ոչ շատ ուշ 1255 թուականից, որովհետեւ Լեւոնը նկարուած է որպէս արքունքին հասած պատանի, որ համապատասխան է 1255 թուականին. «կարճ ազուամազով միրուքը ծածկել է ծնոտը» խօսքերով ենք նկարագրել արքայորդու դէմքը մեր ուսումնասիրութեան տեսրակում. այդ ժամանակ պիտի լինէր 18—19 տարեկան : Այս պատկերը պէտք է նկարուած լինի 1262 թուից տարիներ առաջ, երբ զարդարուել է մի ուրիշ աւետարան նոյն Լեւոնի և իւր գեռատի ամուսին Կեռանի պատկերներով, աւելի մեծ հասակում** :

Այս աւետարանը 1263 թուին Լեւոնը նուիրում է իւր քրոջը Տաւ Ֆիմին, որ «աստուածապահ քաղաքին Սալտայ տիկինն էր եւ պատերազմի պատճառով հեռացել էր այնտեղից եւ պատսպարուել իւր ծնողների եւ եղբայրների մօտ. «եւ զի տրտմեալ էր Տաւ Ֆիմէ վասն վշտացն, որ

*Յօդուածը թէև գրուած է տարիներ առաջ, բայց սրբագրւում է տպագրութեան համար Ն. Նախիջևանում, ուստի և վերստուգել չենք կարող՝ մեր տարակոյտները փարատելու համար :

**Ձեռքի տակ ունինք Լեւոն Գ-ի երեք պատկերը զանազան շրջանից. վերոյիշեալ երկուսից զատ, նաև օժման հանդիսից յետոյ նկարուած պատկերը թագուհու, որդիների և ազնիւների հետ գունաւոր արանկարութեամբ, որ պատրաստել ենք մեր մանրանկարչական աշխատանքի համար :

ժամանեցին նմա, ամ .սուէր եղբայր նորին պր. Լեւոն ետ-
գածախաւս աւետարանս նմա ի մխիթարութիւն եւ ի
փրկութիւն հոգոյ» :



Պատկ. 8.- Երեւանի թանգարան N 84, արծաթ ոսկեջրած,
Կոստանդին Կաթողիկոսի 1255 թ. ա. երես:

Կազմի մեծութիւնն է $16 \frac{1}{2} \times 12 \frac{1}{2} \times 7 \frac{1}{2}$ սմ., ար-
ծաթ, ոսկեջրած: Առաջին երեսին (պատկ. 8) կայ հետեւեալ
արձանագրութիւնը, վերեւի ձախ անկիւնից սկսած, կազմի

շուրջը. Գա. ած. ողորմես սն կոս/անդեայ կաթուղիկոսի
եւ ծնաւդ ս/ց իւրոց եղբարց եւ եղ/բաւրորդեաց Ամեն բու ԶԴ»:

Գրերը ելնդաւոր են, երկաթագրին նմանեցրած և տո-
ղերն առնուած զոյգ զծերի մէջ. «ամէն» բառի առաջին
երկու տառերը, որոնց տակը զիծ ենք քաշել, կցուած են:



Պատկ. 9.- Երեւան թանգարան N 84, արծաթ ոսկեջրած,
Կոստանդին կաթուղիկոսի. 1255 թ. բ. երես:

Երկրորդ երեսի (պատկ. 9) արձանագրութիւնը, գարձաւ ձախ անկիւնից սկսած, շուրջանակի, հետեւեալն է.

Գրեցաւ աւեսարաւնս եւ կազմեցաւ հրամանաւ սն. Կոստանդէա կաթողիկոսի յիշատակ իւր եւ ծն/ողաց իւրոց եւ եղբարց ամմէն (2).»*:

Միջանկեալ կերպով ասենք, որ Կոստանդին կաթողիկոսը հայ գրչութեան և մանրանկարչական արուեստի մեծ հովանաւորներից մէկն է, որի ժամանակ այդ արուեստները կանոնական և իրական պաշտպանութիւն են վայելել նորա կողմից: Նորա հրամանով գրուած են և նկարազարդուած բազմաթիւ ձեռագիրներ, որ Հռոմկլայի հայրապետական զպրոցի և Կիւլիկեան շրջանի մանրանկարչութեան զարգն են կազմում. բաւական է յիշել, որ մեր շատ տաղանդաւոր մանրանկարիչներէ թորոս Թուլինը իւր երկրորդ արուեստաւոր հասակում այստեղ է գործել, և շատ յաճախ նոյն կաթողիկոսի պատուէրով: Ահա այսպիսի մի գեղարուեստաւոր անձի հրամանով է կատարուած և այս կազմը, որ ստացողի և ժամանակի ոսկերչական արուեստի մասին մեզ շատ նպաստաւոր գաղափար է տալիս:

Առաջին երեսի (պատկ. 8) խմբանկարը բարեխոսի կամ խնդրուածքի պատկերն է, արուեստի պատմութեան մէջ յունարէն տեղեւոր բառով յայտնի, անունն ստացուած պատկերի բովանդակութիւնից: Կեդրոնական պատկերը «Յս.», «Քս.»-ն է, ինչպէս և գրուած է գլխին. նորա աջից «Մայր ալ.» իսկ ձախից «Յովնանէս» Մկրտիչ, երկուսն էլ բարեխոսի գիրքով, ձեռքերը աղաչաւորի ձեւով առաջ մեկնած: Խմբանկարի ծագումն ու զարգացումը կապ ունի և Քրիստոսի Ամենակալի կամ դատաւորական գաղափարի հետ, որով և բացատրուում են նորա փոփոխակներէ պէսպիսութիւնը, թէ հայ և թէ օտար քրիստոնէական արուեստների մէջ: Խմբանկարի հատ հատ պատկերներէ ծագումն իրենց գիրքով հին է, բայց այսպիսի խմբակցութեամբ,

* 2-ի մասին տես Երուանդ Շահազիզ. Պատմական Պատկերներ. Թիֆլիս. 1903. էր. 96 և 118:

նաեւ Յիսուսնստած աթոռի վերայ, երեւան է գալիս Ժ—ԺԱ. դարերում, ինչպէս Հարթաւիլի srhaysիկնէ (եռափեղկ պահարան) կամ Լիմբուրգի եկեղեցական թանգարանի մասանց պահարանը, Կոստանդին (920 թ.) և Րոմանոս (944 թ.) կայսրները կողմից շինել տուած*։ Մեզանում այդչափ հին օրինակներ յայտնի չեն, բայց ԺԳ. դարում յաճախ են կրկնուած քանդակագործութեան, մանրանկարչութեան և ոսկերչական արուեստների մէջ այլ եւ այլ տարբերութիւններով, թէ արեւելեան Հայաստանում և թէ Կիլիկիայում։

Մենք այստեղ կանգ չենք առնի համեմատական բացատրութիւնների և մանրամասնութիւնների վերայ, խուսափելով յօգուածին զուտ մասնագիտական բնոյթ տալուց, բայց ընդհանուր առմամբ կարող ենք ասել, որ արուեստագէտ ոսկերչին յաջողուել է պահել բարեխօսի խմբանկարի ժամանակակից արուեստի մէջ մշակուած արպրՖիգուրները իւրաքանչիւրի բնորոշ դիրքով և արտայայտութեամբ։ Յիսուս իւր համեմատաբար աւելի բարձր հասակով, զգեստի վերից վար թէ կապալի և թէ ուսերի վերայ ձգած վերնազգեստի վայելուչ ծալքերով, փեշերի և բազուկների շրջագարդերով, բոլորակի վերայ խաչաձեւ, մեծ լուսոյ պոսկով, մազերի ճակատին ճեղքուած սանրուածքով, որոնց սլորուն խոպոպիքները իջնում են ուսերի վերայ, en face գէմքով և մորուքով, խաղաղ և աչքերը հեռուն ուղղած արտայայտութեամբ, այնով խաչակնքում և ձախով աւետարանը կրծքին սեղմած, յետ չի մնում բիւզանդական նոյն տիպի լաւագոյն ստեղծագործութիւններից։ Իսկ Մարիամ և Յովհաննէս իրենց իրար կողքի դրած ոտքերով, գէպի Յիսուս մեկնած աղաչաւորի ձեռքերով, թեքուած գլխով խոնարհած աչքերով, կիսադէմ և կողքի կեցուածքով բարեխօսի մարմնացումն են բարեացակամ Ամենակալի առաջ։ Շատ գեղեցիկ է Մարիամ իւր

* Diehl. Manuel d'art byzantin. Paris, 1910. Կր. 619, 646. Kraus Geschichte der Christ-Kunst. I. 559; Կոնդակոյ. Իֆոնօկրափիա Սնասա. 38; Մեր Զախատութիւնը. Խաղբակեանք կամ Պապեանք Հայոց Պատմ. մէջ. մասն առաջին. 1928. Վաղարշապատ. Կր. 224—227։

քուրակ և մատաղահաս կնոջ դէմքով, լաջակի, վերնա-
զգեւորի և մինչեւ ոտները հասնող ներքնազգեստի վայելուչ
ձեւակերպութեամբ և ծաւքերով: Նոյնը կարող ենք տեսել
և Յովհաննէս Մկրտչի մասին, որ անապատականի մոր-
թեզգեստի փոխարէն երկար ներքնազգեստ է հագել և ու-
տերի ու թեւերի վերայից մինչեւ ծնկները հասնող քղամիդ
ձգել, պահելով մազերի բնորոշ սանրուածքը, ձակատի
երկու փնջիկներով և աւելի թաւ մորուքը: Ի նկատի պի-
տի ունենալ, որ Մարիամի քիթն ու շրթունքը, ինչպէս
և Մկրտչի նոյն մասերը, ձախ աչքը քիչ լստուած են, և
փոքր ինչ փոխում են տպաւորութիւնը: Բայց ընդհանուր
առմամբ անաղարտ են հասած մեղ, և պատկերներից իւ-
րաքանչիւրը իւր համապատասխան գիրքով, արտայայտու-
թեամբ, ամբողջութեան հետ գեղարուեստական ներգաշ-
նակութիւն են կազմում:

Կազմի միւս երեսը (պատկ. 9.) չորս աւետարանիչնե-
րն են ամբողջ հասակով իրար կողքի կանգնած, միայն
անունները սխալ են նշանակուած, պէտք է ձախից աջ՝
Մատթէոսից Յովհաննէս գնար և ոչ ընդհակառակը, ինչ-
պէս այստեղ: Այդ սխալը պարզ է ոչ միայն այն պատճա-
ռով, որ աւետարանների կարգն այդպէս է, այլ եւ հէնց
ներկայ պատկերների շարքն ի նկատի առնուած: Ձախից
աջ հաջուած, երրորդ աւետարանիչը տոնգուբաւոր է, որ
ընդունուած է առ հասարակ Ղուկաս աւետարանչի համար:

Այս խմբանկարն էլ առնուած է մանրանկարչական ար-
ուեստից. սովորական էր դարձած աւետարանիչներին նկա-
րել իրենց աւետարանների սկզբում, նստած աթոռի վերայ
գրչութեան գործիքներն առաջին եւ զրելիս կամ ներշնչ-
ման ունեկնդիր: Բայց հնագոյն աւետարանների մէջ, յատ-
կապէս արեւելեան ծագում ունեցող, նկարուած են չորսն
իրար կողքի, կանգնած, ի հարկէ, շարժումների եւ հա-
գուստների մէջ պէսպիսութիւններով:

Ոսկեզական աշխատանքը զրոշմաքանդակ է (ciselure),
եւ շատ յաճող, ափսո՛ս, ոչ նկարչի անունը զիտենք եւ ոչ
ոսկերչի, որ հաւանորէն տարբեր անձն է եղել եւ մանրա-
նկարչութեան լաւ ծանօթ:

է.

Մեր տեսած ոսկերչական կազմերի մէջ ամենից բարձրը տեխնիկայի կողմից եւ ամենից գեղարուեստականը պիտի համարել Երուսաղէմի Հայոց մատենադարանի N 2649/94 «Օյուլէն ելած» աւետարանի կազմը, որ զրչուլթեան ժամանակից է, գոնէ, հաստատ կարող ենք ասել երեսներից մէկի համար: Գրիչն է մեր բազմաշխատ եւ տաղանդաւոր մանրանկարիչ Սարգիս քահանայ Պիծակը, որդի Գրիգոր քահանայի եւ Հեղինէի: Ստացողն է մի ուրիշ Գրիգոր քահանայ, «որ ձխալոր Պր. Բարթողումէոս»-ի եւ նորա կնոջ Ավիծի փեսան էր. պարոն Բարթուղումէոսը Սիւ քաղաքում նսրոգել էր. «ի հմանէ, . . . քաղում աշխատութեամբ եւ շատ ծախիւք . . . զսբ. Ն. Սարգիս զաւրաւարն, որ էր իւր հայրենի», սպասներ եւ զարգեր նուիրել: Գրիգոր քահանան էլ այս աւետարանը գրել է տալիս եւ նկարազարդում Սարգիս Պիծակին, 23Ա=1332 թուին, եւ ապա կազմել տալով 23Գ=1334 թուին, նուիրում է նոյն Սարգիս Զաւրաւար եկեղեցուն:


Կազմը արծաթ է ոսկեջրած, $25\frac{1}{2} \times 18,3 \times 6\frac{1}{2}$ մեծութեամբ: Առաջին երեսը (պատկ. 10) խաչելու թիւնն է, Յիսուս բազկատարած, խաչի վերայ, ձեռքերը եւ ոտքերը գամուած: Խաչի փայտի հորիզոնական թեւի վերայ, գլխի երկու կողմից, եղնաւոր տառերով, («ՅԱ.», «ՔԱ.», իսկ խաչի գագաթին «ԱՅ/Խ ԲԱԳԱ/ԼՈՐ ՈՐԷ/ԻՅ» գրուած: Յիսուս գլուխը թեքած է դէպի աջ, աչքերը փակած եւ կողքից հռոտւմ է արիւնը. գլխին խաչազարդ նիւթուս. պորտից ցած ամօթանքը ծածկուած է մինչեւ ծնկները: Ոտքերը ձկուած են դէպի աջ եւ գամուած առանձին առանձին, կրունկներն իրար մօտ եւ ծայրերը հեռու, ոտքերի տակ պատուանդան:

Խաչափայտը հաստատուած է Գողգոթայի բլրին, ուր երեւում է եւ Ագամի գլուխը. ներքեւից իբրեւ ֆոն երեւում են քաղաքի շէնքերը: Յիսուսի աջ կողմից կանգնած են երեք կին, որոնցից մէկը, որ աւելի մօտ է եւ ձեռքերը վեր է բարձրացրել, մայրն է, կողքին «մայր ալ.» գրած: Երկրորդ կինը Մարիամի յետեւից, վերնազգեստի

քղանցքը դէպի երեսը բարձրացրել, որ սգոյ նշան է. դէմքըն էլ նկատուում արտասուքի կաթիլներ. իսկ երրորդ կինը ձեռքերը խաչել է կրծքին, տխրադէմ:

Չախ կողմից ամենից մօտ կանգնած է «Յոնանես», որ զրուած է գլխին, սիրելի աշակերտը, գլուխը թեքել է աջ

ձեռքի վերայ, նոյնպէս տխրադէմ, իսկ ձախով աւետարանն է բռնել: Նորա յետեւից մի գինւորական, հարիւրապետը, վահանը ձախ թեւին, ձեռքը բարձրացրել է դէպի Յիսուս և մատնացոյց է անում. «արգարեւ այրս այս արգար էր»: Նահագել է կարծողակայ, վերանողայ ձգել, կրծքին ճարմանգով կապուած. կոշիկներն էլ զրահապատ են և սրածայր,



միջնագարեան ասպետների ձե-

Պատկ. 10.- Չեռ. երուս. ի
«Ծովէն ելած». արծաթ. ա. երես:

ւով: Սաչի հորիզոնական թեւերից վեր երեւում են աջից լուսինը և ձախից արեգակը, իսկ երկու հրեշտակ անկիւններից սաւառնում են դէպի խաչելութիւնը, ձախինը ձեռքը դէպի այտը տարած լըրել սգոյ նշան:

Այս նկարագրութիւնից երեւում է, որ բուն խաչերութեան տեսարանը ձեւակերպուած է Յովհաննու աւետարանի համաձայն, իսկ հարիւրապիտի ներկայութիւնը, ինչպէս և երկնային մարմինների և հրեշտակների մասնակցութիւնը սուգի արտայայտութեամբ համատես աւետարան-



Պատկ. 11. Ձեռ. եր. «Ծովէն ելած», 1334 թ. ր. երես:

Ների ազդեցութեամբ:

Շրջանակների մէջ, որոնց մակերեսովը բուսական զարդեր են կամ արմաւենիկների օղակաւոր ցօղունների հիւսաւածք, իսկ անկիւններում առաքեալների մարզարէների

անդրիններ, բոլորակների մէջ, վերեւում՝ ձախից աջ՝ Մատթէոս և Յովհաննէս, իսկ ներքեւում՝ Մարկոս և Ղուկաս. խաչափայտի հորիզոնական թեւերի մօտ՝ թաղազարդ գլուխներով, Դաւիթ և Սողոմոն. միւսները ուղիղ կարելի է ներքեւի շրջանակում երկու ձիաւոր արշաւում են իրար դէմ, վերեւ զբուսած. «սբ. Սարգիս», և սբ. Գորգ» :

Երկրորդ երեսը (պատկ. 11) ծնունդն է. վերեւի ձախ անկիւնից սկսած դէպի աջ՝ շուրջանակի մի արձանագրուած թիւն տեղեկութիւն է տալիս կազմի ծագման և ստացողի մասին .

«Քահանայ գլխ կարդացեք. / զեկեղեցիս բանիւ լցեք: Եւ գբարձր/եալն քս. աղաչեցեք: գԳԻԳ/որ երեց աւր գալցն իւր յիւեցեք: Թվ: 23Գ»:

Ամբողջ տեսարանի կեդրոնական մասը քնարայրի մէջ կատարուած ծնունդն է, երեք մոգերի երկրպագութեան հետ: Մարիամ պառկած է իւր զգեստով, ձեւի և ծալքերի կատարեալ պահպանութեամբ, գլխի շուրջը լուսոյ պսակով. նորա առաջ մտուրքում գրուած է խանձարուրքով պատած մանուկը, աչքերը բաց և լիմաստակից, գլխին խաչազարդ լուսոյ պսակ: Երկու կենդանիներ, եզն ու էջը, գլուխները մեկնել են դէպի մտուրքը, լեզուները հանած. մտուրքը զարգարուն է և սրբատաշ քարով, մինչեւ իսկ խանձարուրքի լաթը օրնամենտով:

Այլի բացուածքի առաջ ծռնել են չոքել երեք մոգերը շքեղ զգեստաւորութեամբ. ամենից՝ առաջ ծերունին, իւր ընծան տուփի մէջ բռնած. նորա յետեւից ամենից երիտասարդը, անմորուք, գլուխը վեր բարձրացրած: Նորա հետ խօսում է միջանասկը, մորուքաւոր, որ մատով աստղն է ցոյց տալիս երիտասարդին: Բացուածքի շուրջը ժալուեր են, նրանք էլ զարգարուած բռնական օրնամենտներով. ժալուերի խողոնների մէջ մակաղած են հատ հատ գառներ: Այլի գլխին կանգ է առել ութ ճառագայթներով աստղը, իսկ աւելի բարձր կիսաշրջաններից ձեւացրած երկնքից լցած են իջնում լուսոյ երեք ճառագայթներ մին-

չեւ այլի խորքը, Յիսուս մանկան վերայ: Այլի գլխին երկու կողմից ծունկ են չոքել երկերիւ, զանգուր մազերով, թեւաւոր հրեշտակներ, երեսները դէպի կատարուած հրաշալիքը, ձեռքերը առաջ մեկնած բարեպաշտական մեծաբանքի արտայայտութեամբ: Այլի յետեւից, բացուածքն հակառակ կողմը, երեք հովուներն են. ամենից երիտասարդը լայնեզր, գմբեթաձեւ գլխարկով, նստած է ժայռի վերայ, փչում է իւր սրինգը. երկրորդը նման գլխարկով, բայց մորուքաւոր, մի ձեռքը դրել է ծեր հովուի ուսին, միւսով աստղն է ցոյց տալիս. ծերունին գլխաբաց է և մորթենի հագած:

Ներքեւի մասում լողացնելու տեսարանն է, առնուած անվաւեր մանկութեան աւետարանից: Մի պառաւ կին՝ Եւան՝ նստած է և ծնկանը դրել է մերկ մանկանը, Եւայի առաջ մի լայնաբերան և դրսից օրնամենտներով զարդարուն անօթ. մի այլ երիտասարդ կին՝ Սալումէն՝ զարդարուն չոլնջով ջուր է լեցնում այդ անօթի մէջ. նստած կիներ ձեռքը ջրի մէջ կոխած ջերմութիւնն է չափում և խօսում է կանգնած կնոջ հետ, երեսը նրան դարձրած: Աւելի ձախ մեկուսի նստած է Յովսէփը, թաւ մորուքով, ճոխ մազերով, լուսոյ պսակով, գլուխն աջ ափի մէջ առած և ձախը ծնկների վերայ, ներքնազգեստի վերայից շքեղ, ճոխ ծալքաւորած ծիրանի ձգած, մտածում է կատարուող դէպքերի վերայ: Այս բոլորն առնուած է երկու շերտից բազկացած շքեղ չրջանակի մէջ. ներսինը արմաւենիկի և նորա ցօղունների ոլորապտոյտների շարք, օղակներով և հանգոյցներով, իսկ դրսինը կազմի արձանագրութիւնն է եկնդաւոր գրերով, որ մէջ բերինք վերեւ, երկու շերտերն էլ առնուած գծերի մէջ: Շրջանակի անկիւններում ձախից աջ Զաքարիա և Եզեկիէլ, որոնց անուաններն էլ գրուած են, իսկ ներքեւում Եսայի եւ Մաղաքիա (?) հաւանօրէն, որոնց անունը չի գրուած:

Անցնելով նրանց հնազաւան-գեղարուեստական գնահատութեան, երեւան է գալիս մի կարեւոր հարց. նրանք

նոյն ժամանակի և այն արուեստագէտի գործեր են, թէ ոչ : Երուսաղէմում 1911 թուին, երբ լուսանկարում և համա-
ռօտ նկարագրում էինք այս գործը, ոչ մի կասկած չենք
ուենեցել այդ մասին, բայց այժմ, երբ լուսանկարները
դրուած են մեր առաջ և աւելի մանրամասն ուշագրութեան
ենք տոնում, կասկածի հիմքերն ակներեւ են : Հէնց սկզբից
աչքի է ընկնում, որ կազմի առաջին երեսը խաչելութիւնն
է և երկրորդը ծնունդը, որ բնական չէ . բայց աւելի կարե-
ւոր է երկուսի արուեստների տարբերութիւնը պատկե-
րագրութեան, զարդարանքի և հնագրական տեսակէտով :

Ծննդեան տեսարանի արուեստագէտը ոչ միայն աւելի
կարող է, ընդունակ, այլ և տարբեր իւր ձևակերպելու
յատկութեամբ . պատկերներն այստեղ մարմնաւորած են եւ
կենդանի քան խաչելութեան խմբանկարի մէջ, որ համե-
մատարար աւելի ցամաք է, թէև դարձեալ բարձր արուես-
տաւորի գործ, եւ այդ ոչ այն պատճառով, որ մի տեղ
արուեստագէտը ուրախ տրամադրութիւն պիտի արտայայ-
տէր, միւս տեղ ախուր եւ ընկճուած : Ծննդեան պատկե-
րագրութեան մէջ օգ կալ և տարածութիւն, մինչդեռ այս-
տեղ այդ կողմը պակաս է եւ աւելի մօտ է հարթաքանդակ
արուեստի : Տարբերութիւն նկատուում է նոյն խիւ մեղա-
լիտներն պատկերագրութեան եւ նրանց շրջանակների մէջ,
որ չպէտք է լինէր, գտնէ, անկիւնների նկատմամբ . եթէ
վերցնենք ներքեւի շրջանակի ձիււորները, ո՛րչափ զգալի
են համաչափութեան եւ առօրգ կենդանութեան պակասու-
թիւնները Ծննդեան պատկերագրութեան համեմատութեամբ :
Տարբեր են նաեւ երկուսի մէջ զարդագրութիւնները իրենց
մոտիւններով եւ ձևակերպութեան եղանակով . մի տեղ երն-
դաւոր, միւսը խոր : Զանազանութիւնը նկատելի է նոյն
խիւ հնագրական նշաններով, թէև համեմատութեան նիւ-
թը չնչին է . խաչափայտի մակագրութեան տառերը, թէև
ուռուցիկ, ինչպէս եւ Ծննդեան կողի արձանագրութիւնը,
բայց տարբեր նոյն տառերի բնորոշ գծերով . համեմատեցէք
ա . 5^{րդ} գրերը, որոնց տարբեր ձևակերպութիւնն աւելի է

աչքի ընկնում: Այս հիմունքներով կատկածում ենք երկու կողերի միևնույն արուեստագէտի գործ լինելու մասին:

Ծննդեան կողի արձանագրութիւնից տեսանք, որ 1334 թուի գործ է այն եւ աւետարանի ստացող Գրիգոր քահանայի կողմից պատուիրուած. սակայն արուեստով բոլորովին տարբեր գրիչ եւ նկարիչ Մարգիս Պիծակի արուեստից. աւելի մօտ է Պիծակին խաչելութեան պատկերը, բայց դարձեալ այնպիսի տարբերութիւններով, որ նոյնացնել չենք կարող մեր ձեռքի տակ եղած նոյն մանրանկարչի մի քանի խաչելութեան պատկերներին հետ: Մեզ մնում է ընդհանել, որ ժամանակակից մի ուրիշ վարպետի գործ է, որ արուեստից դատելով, չի կարող այն ժ. Գ. դարու կէսերից վաղ եւ ժ. Գ. դարու կէսերից ուշ լինել. տարաբաղդաբար տեղի ոգութեան պատճառով չենք կարող պարզել այստեղ մեր հիմունքները. սակայն նկարներու տարբեր ծագումը չի խտտում, որ ոսկերչական աշխատանքը միևնույն վարպետի գործ լինին, Գրիգոր քահանայի պատուէրով ի կատար ածուած: Ինչպէս էլ լինի երկուսն էլ մեր ոսկերչական արուեստի դուռն գործոցներ են, մանաւանդ ծննդեան տեսարանը, այսպիսի հազուադիւր եւ նուրբ դրոշմաքանդակներով մեր ձեռքը հասած:

Ը.

Վեցերորդ եւ եօթներորդ պրակներում բերած մեր օրինակները կիլիկեան ծագում ունէին. արեւելեան Հայաստանից թանգագին մետաղից կազմեր մեր ձեռքը չեն հասել ժ. Գ. դարից, կամ աւելի վաղ ժամանակից. բայց իսկի Պոռչեանի շինել տուած գեղարուեստական, մասանց պահարանը ապացոյց է, թէ ինչպիսի՜ բարձր դարգացման պիտի հասած լինէր ոսկերչական արուեստը այդտեղ*. ժ. Գ. դարու կէսերից միայն ունինք մի կազմ երեւանի թանգարանում, որ ծագմամբ Անիից պէտք է համարել, որովհետեւ նուիրուած է

* Տես մեր աշխատութիւնը «Խաղբականք» էն. Ա. եր. 185—199 մանրամասն նկարագրութեամբ եւ պատկերներով:

մերձակայ Հոռոմոսի վանքին** : Արուեստն էլ իւր ձեւ-
կերպութեամբ արեւելեան Հայաստանի մանրանկարչութեան
աւանդների համեմատ է : Տարաբաղդաբար կազմի արձանա-
գրութիւնները երկու երեսունն էլ պակասաւոր են . մնա-
ցած մասերից տեղեկանում ենք , որոմն Զաջուռ եւ իւր
որդին Ամիր Սմայատ նուիրել են այս աւետարանը Հոռոմո-
սի ուխտին 27.9 = 1347 թուին . ոսկերիչն է Գրիգոր :

Զաջուռի եւ իւր որդի Ամիր Սմայատի հետ ի՞նչ կապ
ունի Մանկասարի եւ Ասլան խաթունի որդին , սրի անուան
վերջին տառերն են Թնացած միայն , դժուար է հաստատ
ասել . իսկ միւս երեսում յիշուած «Մանգիանոս» . . . «(Սար)-
գիս կրան (աւ) որ » վանքի վանահայրն ու միաբաններն
են , որոնք ընդունել են նուէրը կամ թեմանդակ հանգիսա-
ցել գործի յաջողութեան :

Կազմը արծաթագատ է $26 \times 18\frac{1}{2} \times 6\frac{1}{2}$ սմ . մեծու-
թեամբ : Առաջին երեսը (պատկ. 12) խաչելութիւնն է
գրոշմաքանդակ . Յիսուսի աչքերը փակ են , գլուխը գէպի
աջ թեքուած , մազերն առատութեամբ թափուած են ուսերի
վերայ , ճակատի մասն առանձին գէպի յետ տանրուած , որ
երեւան է գալիս նաեւ ԺԳ . դարու արեւելեան Հայաստանի
մանրանկարչութեան մէջ , լուսոյարակը խաչապարզ : Սաչի
հորիզոնական թեւերի վերայ գրուած է «Յս. Քս.», ցու-
ցանակը խորամիտ գրերով , «այ ե քաղաւորն հրեից» .
հորիզոնական թեւերի վերայ աջից արեգակն է լիադէմ
խաչածեւ ճառագայթներով , իսկ ձախից լուսինը կիսադէմ ,
սկաւառակի վերայ դուրս ընկած : Անկիւններից երկու
հրեշտակների կիսանդրիներ , աչքերն ուղղած գէպի խա-
չեցեալը : Երեւում են ձեռքերի և ոտքերի դամուած տեւ

** Զեռագիրը , N 99/94 , մագաղաթ . աւելի անկիւնաւոր , քան
բոլորգիր , դուցէ , բառիներէնի ազդեցութեամբ , գրուած և նկա-
րագարգուած է Աստուածատուր քահանայի ձեռքով 1324 թուին ,
«յաչխարհս ֆռանգալի քաղաքս ձէն , Անտոն հգնաւորի յանձ-
նարարութեամբ : Նկարչութիւնն էլ արեւմտեան զգալի ազդեցու-
թիւնն է կրում :

ղերը, ոտքերը և կրունկներն իրար կողքի, պատուանդանի վերայ: Յիսուսի մարմինը մերկ է, միայն ամօթանքը ծածկուած մինչև ծնկները սփածանելիքով: Աջ կողքից արև-



Պատկ 12.- Երեւանի թանգ. 99/94. արծաթ. 1347. ր. երես:

նը հոսում է ամանի մէջ: Սաչափայտը հաստատուած է Գողգոթայի բլուրը ձեւացնող բարձրութեան վերայ, ուր թաղուած է և Ագամի գլուխը:

Աջից կանգնած է «Մարիամ», եղնաւոր մակազրու-
թեամբ գրուած անունը, ձեռքերը բարեխօսի գիրքով. հա-
գել է լաչակ, որ հասնում է մինչև ծնկները, գլխի վե-
րայ բոլորածեւ և ճակատի կողմից ծալքաւորած, իսկ

քղանցքը զարգարան քով եղերուած, ինչպէս և բազուկները և
Հուսոյ պատկը բոլորակ է: Չափ կողմից կանգնած է «Յովհաննէ-
նէս», ինչպէս մականդրուած է գլխի վերեւը. գլուխը թեքել է
դէպի աջ, յենուելով իւր աջ ձեռքի վերայ, իսկ միւսուժ
թաշկինակ բռնել փաթոյթի փոխարէն (սղոյ նշան): մագե-
քը կարճ են և ճակատին մի շերտ դէպի ցած սանրուած,
մորուքը նոյնպէս կարճ է և բոլորակ, խորասուզուած
մտքերի մէջ, որ ոսկերիչը, աւելի ճիշդ նորա օրինակի
նկարիչը, կարողացել է լաւ արտայայտել, ինչպէս և միւս
դէմքերը՝ համապատասխան անձերին: Ունի երկուսը,
բոլորակ նիւթուս, զծով եղերուած: Հազել է մինչեւ սո-
ները հասնող կապայ և ուսերին ձգել կրկնոց մինչեւ
ծնկները:

Ոսկերչական գործը, թէեւ ժ.Գ. դարու կէսերին է,
բայց նորան օրինակ ծառայող պատկերագրութիւնը շատ
աւելի հին է. այստեղ չկան սղոյ և տխրութեան արտա-
յայտութեան այնպիսի խիստ նշաններ, որ յատուկ են ժ.Գ.
դարից արդէն սովորական դարձած խաչելութեան պատկե-
րագրութեան. Մարիամ բարեխօս է և ոչ սպացող և կոծող
մայր, Յովհաննէսն էլ մտքերի մէջ խորասուզուած, ան-
սովոր է ձախ ձեռքին բռնած թաշկինակը փաթոյթի փո-
խարէն, որ կարող է նախնական օրինակների արտանկա-
րութեան սխալ լինել: Մարիամի և Յովհաննէս տիպերը,
հրեշտակների անդրինները, խաչեցեալի մարմնի գլխից, բո-
լորը մատնանշում են մեր ժ.Ա. դարու մանրանկարչութեան
մէջ բնդհանրացած երեւոյթները, որոնց ծագումը Թ—Ժ.
դար կարելի է տանել:

Որպէս շրջանակ չորս կողմը պատում էր նուիրողի
եղնդաւոր արձանագրութիւնը, վերինն ամբողջապէս և
ձախ կողինը մասամբ պոկուած. քնացածը հետեւեալն է...
«մայ որդոյ մանկայարին եւ Ասլան խաբուեին եւ Չաչո
(կարելի է վերջին տառը ևս կարգալ) / եւ որդի իմ Ամիր
Ամպաս (սպ կցուած վերջին s և հետեւեալ բառի համար)
վեցաք գաւեսաւան/ս սք. ուխտիս Հոռոմոսի որք քնդեռնուք
յաղաւքս յիւեցեք»:

Միւս երեսը (պատկ. 13) կեդրոնում Աստուածածինն է, նոյնպէս զրոյմաքանդակ, բազմած երկար բարձով (մուշաքայ) ծածկած, անթիկունք ցանցազործ աթոռի վերայ, գլուխը թեքած դէպի մանուկը, որ նստած է մօր ձախ ծնկանը: Փլկի շուրջը լուսոյ պսակով, լաչակը բոլորածն է, ծաւքաւորած, որ իջնում է ուսերի վերայ. ճակատին խաչ, որի անկիւններում մի մի բոլորակ կէտ: Լաչակի տակից երեւում է վերնազգեստը, ուսերին ևս մի մի խաչ, կեդրոնի անկիւններում դարձեալ մի մի բոլորակ: Զախով բռնել է մանկանը, իսկ ավր կրծքին դրել. ոտքերի տակ ունի փոքրիկ պատուանդան: Մարիամի կողքից գրուած է եւնդաւոր տառերով. «Մարիամ սբ. ածայծին»: Պատանեակ Յիսուսը նստած է մօր ծնկանը, աչքերն ուղղած նայողին, ավով խաչակնքում է, իսկ ձախով փաթռլի է բռնել. ունի բոլորակ, խաչազարդ լուսոյ պսակ: Հազուադէպ մանրամասնութիւնը դժուար է որոշել, բայց երկար տունիկայ է հագել և կրկնոց ուսերին, ոտերը բոբիկ են, մօր գոգին լինած



Պատկ. 13.-Երեւանի թանգ. 99/94
արձաթ, 1347. Բ. Երեւ

է մօր ծնկանը, աչքերն ուղղած նայողին, ավով խաչակնքում է, իսկ ձախով փաթռլի է բռնել. ունի բոլորակ, խաչազարդ լուսոյ պսակ: Հազուադէպ մանրամասնութիւնը դժուար է որոշել, բայց երկար տունիկայ է հագել և կրկնոց ուսերին, ոտերը բոբիկ են, մօր գոգին լինած

կողքին գրուած է, «Յիսուս/Քս. որդիս այ.» :

Աստուածածնի այս տիպը իւր մանկան հետ բիւզանդիան ողիգիսթիոյի տիպն է, որ Պոլսի ամենամեծ սրբութիւններէց մէկն էր, ըստ Կոնստանդի ծագմամբ ասորական : Հայ արեւեստի մէջ ԺԳ—ԺԴ. դարերում տարածուած է այս պատկերը, բայց Հայաստանում ունինք նաեւ նախապատկերամարտական, մինչ է. դարը կանգնած և նստած օրինակներ քանդակագործութեան մէջ, որով հաստատուում է նորա արեւելեան ծագումը* :

Չորս անկիւններում չորս աւետարանիչների անդրիներն բոլորակ շրջանակների մէջ. վերեւ՝ ձախից աջ՝ Մատթէոս և Մարկոս, ներքեւում՝ Դուկաս և Յովհաննէս, որոնց անուններն էլ ելնդաւոր տառերով նշանակուած են կողքերին : Նոքա նստած են ցանցադործ պթուր վերայ որ աւելի պարզ երեւում է Մարկոսի և Դուկասի պատկերներից եւ կողափայտերը վերջանում են հնգատերեւի նման սրածայր զարդով : Աւետարանիչներից իւրաքանչիւրն ունի իւր գիմագծերն ու արտայայտութիւնը, որ մասամբ նկատելի է նաեւ մանրանկարչութեան մէջ : Մատթէոս գլուխը դէպի ձախ է թեքել, միւրուքը թելթել, գլխի մագերը՝ կողքերին դէպի աջ ու ձախ, իսկ ձախատին մի շերտ դէպի յետ սանրուած : Մարկոս ընդհակառակ դէպի աջ է թեքել գլուխը և յետեւ աջ ձեռքի վերայ, ձախով բռնել է պնակի տի վերայ տարածած երկթերթը, տողուած գոյգ գծերով. ուրեմն երկաթաւիր պիտի գրուէր. մի նշան եւս, որ այս խմբանկարը իւր ծագմամբ շատ աւելի հին է քան ԺԴ. դարը, երբ սկսեւ է իշխող հանդիսանալ բոլորգիւրը : Դուկաս գանգրահեր է և գլխը ձեռքին գրում է պնակի տին ամրացրած երկթերթի վերայ. Յովհաննէս ճաղատ, լայն ձախատով, աջով բռնել է մագաղաթը, իսկ ձախը վերանդրել (պարզ չէ) : Ընդհանուր առմամբ թէ առաջին և թէ երկրորդ երեսի պատկերագրութիւնը յաջող է, արտայայտութիւնները բնորոշ և կեցում քները համապատասխան պահանջին :

* Տես մեր աշխատութիւնը «Խաղբակեանք» են. Գ. 215—221 :

Սյունիքի իրրեւ շրջանով եղել է. Եւնդաւոր արձա-
նադրութիւն չորս կողմից. բայց մի կողմն ամբողջապէս
ընկած է, զերեւի աջ և ներքեւի ձախ անկիւններն հետ.
մնացածը հեռեւեալն է, զերեւի ձախ անկիւնից դէպի աջ.



Պատկ. 14. - Էջմ. N 1033 ն. ց. արծաթ, ոսկեջրած, 1496 թ. ա. Երևա:

«Ստեփանոս/. . . / գիւ կրան/. . . ուս յիւեցեք յաղարս
ւի (աղաչեմք):» Աստուածածնի գլխին նշանակուած է Թուա-
կանը. «ՉՂԶ» Աստուածածնի աթոռի առկ. «Զմեղուցեալ/
ասկերի/չ Գիւ/ար յիւեցեք/ւ»:

Ժե. դարու վերջերի ոսկերչական մի գործ է պատե-
րազմի բնթացքում Մուշից բերուած, ալժամ Էջմիածնի
Ն. Յ. N 1039 աւետարանի արծաթապատ եւ ոսկեջրած
կազմը: Աւետարանի գրչութեան յիշատակարանն բնկած է,
բայց անպայման ԺԳ. դարու գործ է, հաւանօրէն Դրազար-
կի գալբոցի կամ Յովհաննէս արքայեղբոր վանքերից մէկի
ընտիր եւ գեղարուեստական բարձր ստեղծագործութիւն-
ներից մէկը մանրանկարչական տեսակէտով, ազնիւ մազա-
ղաթի վերայ, լաւ բոլորգրով:

Մեզ համար հետաքրքրականը կազմի առաջին երեսն
է (պատկ. 14), 32×21 սմ. մեծութեամբ. արձանագրու-
թիւնները, որ ելնդաւոր են, տալիս են հարկաւոր տեղե-
կութիւնները թէ պատկերների եւ թէ կազմի ծագման մա-
սին: Վերեւ կամարի տակ նստած պատկերի կողքերից գր-
ուած է. «sr. ած. յս. /fv. որ նստիս ի քոքեա. Սան փո-
խանակ Ս. արոս ողորմեա քո արա/ւածոցս /քվ. Զեե (1496)»:
Ներքեւի կեդրոնական պատկերի գլխին, մէջ տեղում.
«մայր/սն այ», իսկ միւսներին՝ «առաքեալն»:
Աւելի ներքեւ կիսաշրջանաձեւ երեք տողում գրուած է.

Զսուող արծաթոյ զՄեխքեք եպս. սր. Կրպի յիւ./

Զկազմող պատկերացս զԿրպս. արեղայս զԲաղիւսեցիս յւ./
Զոսկերիչ Սեանդարն եւ զՇահողութարն յւ./

Իսկ աւելի ցած՝ բոլորակ շրջանակի մէջ. յի. քի. ծառա»,
փակագրով «Կարապետ արեղա»:

Այս արձանագրութիւններով արդէն պարզուած է պատ-
կերների բովանդակութիւնն ու նրանց ծագման ժամանա-
կը գործին մասնակից անձանց հետ: Փառաւորեալ Յիսուս
կամ Ամենակալը նստած է չորեքկերպեան աթոռի վերայ,
իսկ ներքեւը Մարիամ առաքեալների հետ բարեխօսւ: Քա-
ռակերպները դասաւորուած են ոչ ճիշդ եզերկ. Ա. 10-ի կամ
Յայտ. Դ. 7-ի համեմատ, այլ վերեւից հրեշտակն ու ար-
ծիւը, իսկ ներքեւից եզն ու առիւծը՝ ձախից աջ, քրիս-
տոնէական արուեստի սիրելի պատկերացումներից մէկը,

որ ծագումով անշուշտ ասորա-բաբելոնական է : Յիսուս թէև նստած է , բայց աթոռը չէ ձեռակերպուած թիկունքով կամ անթիկունք և ոչ էլ չորեքկերպանները աթոռի տեղ են ծառայում նրան . նկարչի պատկերացումը նախ է , աթոռ կոչուածը մի տափակ տախտակ է , որի վերայ դրել է իւր ոտները Ամենակալը : Նա խաչագարդ լուսոյ պսակ ունի , ամբողջական գէմքով եւ մորուքով , աջով խաչա-կնքում է , իսկ ձախով կրծքին է սեղմել կազմած աւետա-րան : Հագել է բիւզանդական կայսերական տունիկայ , օձիքն ու կուրծքը զարդարուն վերից վար . ծիրանին ձգուած է ձախ թևի վերայից , որ առաջի մասում ցած է իջնում Ծնկների վերայով եւ ոտների միջով մինչև յատակը : Մի մի հրեշտակ աջից եւ ձախից կանգնած են ամբողջ հասա-կով , քիչ գէպի առաջ թեքուած եւ ձեռքերը մեկնած որ-պէս մեծարանքի արտայայտութիւն :

Ներքեւում խմբանկարի կեդրոնում Մարիամն է աթոռի վերայ նստած , որ չի երևում եւ ձեռքերը բազկատա-քած բարեխօս . գլխին նկատուում է ծալքերով լաչակը , շուրջը եղնաւոր լուսոյ պսակ , մինչև ոտքերը հասնող ներք-նազգեստի վերայից հագել է շապկածէ վերնազգեստ , ոտ-քերին անկրօնիկ կոշիկ : Մարիամի երկու կողքից երկու կարգով շարուած են առաքեալները . ներքևի շարքը բա-րեխօսի գիրքով ձեռքերը մեկնած , վերևի շարքից միայն , ոմանց ձեռքերն են երևում : Նրանցից երեքը անմորուք են , ինչպէս մանրանկարչութեան մէջ քրդաներացած էր :

Որպէս չրջանակ ներքից վեց մարգարէների անդրի-ներ են կլոր չրջանակի մէջ : Մարգարէների շարքի մէջտե-ղում մի բոլորակի մէջ , կարապետ արեղայի անուան փա-կագիրն է , իսկ նրանից բարձր որ և սուրբի գլուխ , հաւա-նորէն Յովհաննէս կարապետ , երկու կողմից մի մի թռչուն , կտուցներին եռատերևի ճիւղ բռնած : Աջ եւ ձախ կողերին , չրջանակի բուսական զարդերի մէջ , երկերկու սուրբի անդ-րիներ , ձախ չրջանակը ամբողջապէս պոկուած է , բայց պէտք է նոյն կազմութիւնն ունենար , ինչպէս աջը , որ լրիւ մնացած է : Մի մի անդրի էլ պէտք է լինէր վերևի :

անկիւններում, որոնցից միոյն աջ անկիւնքն է մնացած, չըջանալի մի մասի հետ, իսկ ձախ կողմը՝ անկիւնի զարւոյերի հետ թափուած է։ Ամբողջ խմբանկարը կազմուած է «բարեխօս ունիւք սուրբ զՄարիամ զԱստուածածինն» մաղթանքի համեմատ։

Երկրորդ երեսին՝ կեդրոնում մի խաչ է, թւերի ծայրի զոյգ անկիւններում եռագնդակներով, իսկ կազմի անկիւններում աւետարանիչների նշանակներն են իրենց աւետարանը բռնած. այս մասերն էլ ոսկեջրած են։ Մնացած զարդերը յետոյ են աւելացրած եւ զկղերնական կազմի մաս չեն։

Այս կազմի մէջ արժէքաւորն այն է, որ ժամանակի և տեղի հետ ունինք և նրա ծագմանը մասնակիցներին անունները. արծաթի նուիրողն է Սուրբ Կարապետի «Մեղքըսէթ» եպիսկոպոսը, պատկերներին կազմողը՝ Կարապետ արեղայ Բաղիշեցին, ոսկերիչներն են Սքանդար և Շահգուբաթ։ Պատկերներին կազմող կամ նախարտակի պատրաստող Կարապետ Բաղիշեցին ծանօթ է մեզ և ուրիշ աղբիւրներից. նա ընտիր գրիչ է, միջակ մանրանկարիչ, ինչպէս և մեր կազմի պատկերն է ցոյց տալիս, և կրօնական բանաստեղծ. նա է գրել և լուսանցքները զարդարել ԽՂՄ. Ն. ց. N 222 Գանձարանը, ինքն էլ իւր կողմից կաֆաներ և գանձեր աւելացնելով ԶԼԲ = 1483 թուին։ Հաւանօրէն հէնց ինքն էլ նուէր է բերել Ս. Կարապետի վանքին, որի միաբաններից մէկը՝ Մակար Հենեցին նորոգել է, և օգտուելով յիշատակարանից, որ այժմ չկայ, յայտնում է, թէ «Գրեալ էր գանձատետրս յեզր Բաղէշ քաղաքի, ի Վանքս գոմոց... (կոչ) եցեալ... ձեռամբն Կարապետ արեղայի քարտուղարի իմաստն»։

Ժ.

Մի ուրիշ տեսակի աշխատանք է Երուսաղէմի Հայոց N 2569/14 աւետարանի կազմը. ձեռագիրը գրուած է 1577—1579 թ. Խիզան քաղաքում, Մարտիրոս քահանայ գրչի ձեռքով, որը և նկարազարդողն է։ Խիզան կամ Հիզան քաղաքը, որ Ժ.Թ. դարու վերջերին՝ այլեւս գոյութիւն

չունէր իբրեւ քաղաք և հայաբնակ վայր, շատ կարեւոր գեր է կատարել մեր գրչութեան և մանրանկարչական արուեստ- ների նկատմամբ, այնպէս որ կարելի է խիզանի դպրոցի մասին խօսել. մանաւանդ այս Մարտիրոս քահանայի ըն-



Պատկ. 15.- Եր. N 2569/14. արծաթ. ժ. 2. դար. ա. երես

տանիքը՝ հայրը Սարգիս քահանայ, եղբայրը նոյնպէս Սար- գիս քահանայ, որդին Գրիգոր քահանայ իրենց աշակերտ- ներով և աշակերտների աշակերտներով մի փառաւոր շքան են կազմում խիզանի դպրոցի պատմութեան մէջ:

Աւետարանն ստացել է «սրբաօտէր քահանայն Մարտիրոս կրանաւորն, որ ետ վարդարել... տակով և լոջւարդով, դեղեօք և նկարիւք և գեղեցիկ ճարտուարով» և նուիրում է Երուսաղեմի Հայոց Վանքին Անդրէաս և Դաւիթ արքեպիսկոպոսների ձեռքով, որ պատրիարք եղան նոյն վանքում իրար յետեւից 1566—1595 և 1595—1615 թ. թ. : Կազմն էլ, թէեւ վերան թուական չունի կամ արձանագրութիւն, բայց անկասկած գրչութեան ժամանակից է և Խիզան քաղաքում պատրաստուած ու անմիջապէս նուէր բերուած Երուսաղեմ, ուր պահուած է մինչեւ այժմ : Ո՞վ է կազմի նախարտակը պատրաստել, հաստատ չգիտենք, բայց անհաւանական չէ, որ նոյն Մարտիրոս քահանայի ձեռքով լինի :

Կազմի մեծութիւնն է $25,2 \times 18\frac{1}{2} \times 9$ սմ. , արծաթապատ, գուրս ընկած մասերը սկզբում : Առաջին երեսը (պատկ. 15) խաչելութիւնն է, աջից Մարիամ և ձախից Յովհաննէս. Մարիամ երեսը թեքել է ձախ ձեռքի մէջ, իսկ Յովհաննէսը աջ. Մարիամի երեսը ջգմուած է : Մի ուրիշ կին՝ Մագդաղենացին՝ ծունկ է չօքել խաչի պատուանդանի մօտ և գրկել խաչափայտը, որ հաստատուած է Գողգոթայի վերայ, ուր երեւում է եւ Ադամի գլուխը. Մագդաղենացու այդ ձեռով երեւոյթը այս խմբանկարի մէջ շատ ուշ է յայտնուում քրիստոնէական արուեստի մէջ : Խաչափայտի գլխին, ուր ցուցանակն է լինում սովորաբար, թեւատարած հաւալուսինը կերակրում է իւր ձագերին կրծքի արիւնով. եկեղեցու նշանակն է այդ, սիրելի մի մօտիւ, գործադրուած մանրանկարչութեան, որմանկարչութեան, քանդակագործական և ոսկերչական արուեստների մէջ :

Միւս երեսին (պատկ. 16) փառաւորեալ Ամենակալն է, բազմած անթիկունք և մութաֆայով ծածկուած աթոռակի վերայ, կուրծքը բաց է, ծիրանին՝ ձախ թեւի վերայից ձգուած՝ ծածկում է միայն իրանի ներքեւի մասը, ծնկները և ոտների հետ, մորուքաւոր է, գլխին մազերը ճակատին երկուսի բաժանուած, որ ոլորուն խոպովի քներով իջնում են ուսերի վերայ : Լուսոյ պսակը բոլորակ է : Աւետարանի

տարանիչներն չորս նշանակները Ամենակալի չորս կողմից .
 վերեւ արծիւը , ներքեւում եղը , աջից հրեշտակը , ձախից
 առիւծը , բոլորն էլ հարթ քառանկիւնի պատուանդաններն
 վերայ . հրեշտակը անդրի է և ոչ ամբողջ հասակով . քա-



Պատկ. 16.- Եր. N 2569/14. արծաթ. թղ. դար. ր. երես:


աւակերպեան աթոռի գաղափարն է այս , միայն ան-
 սովոր ձեւակերպած արուեստադէտի կողմից : Երկու
 հրեշտակ ձեռնամաձ սաւառնում են դէպի աթոռի պատ-
 տանդանը :

Այստեղ մեզ հետաքրքրողը զեղարուեստական ձեւակերպութիւնից աւելի, որ թոյլ է, արտեստի տեխնիկան է, ձեռքի իսկական գործ. երեւաւոր մասերը պատրաստուած են մուրճով (չիֆթիչի գործ), իսկ զաշտի ծաղիկներն ու տերեւներն իրենց ցօղուններով, փորագրուած։ Գնահատելի է այս գործը յատկապէս որպէս տեղական և ժողովրդական արուեստի արդիւնք։

ԺԱ.

Ամբողջապէս քանդակուած է և զաշտերը կիսուածազարդով ծածկուած էջմ. ն. ց. N 89 աւետարանի արծաթապատ կազմը. ձեռագիրը բերուած է Լիւից պատեկադմի ընթացքում. մեծութիւնն է $19\frac{1}{2} \times 14 \times 6$ սմ. գրուած թղթի վերայ, բոլորգրով, Սահակ գրչի և ծաղկողի ձեռքով, ՌՀՌ. = 1622 թուին, «ի քղք.իս Բաղէշ, ընդ հովանեաւ սր. Սարգսին»։ Սահակ Բաղիշեցին իւր ժամանակի և շրջանի նշանաւոր մանրանկարիչ է և գրիչ, որի մի քանի գործերը յայտնի են մեզ։

Բարեբաղդաբար կազմի մէջքի արձանագրութիւնն էլ մեզ տեղեկութիւն է տալիս ժամանակի, ստացողի, ոսկեր-



Պատկ. 17. - էջմ. N 89, արծաթ. 1639 թ. բերանակալ։

էի և նորա օրինակը Զատարաստող նկարիչների մասին (պատկ. 17).

«Յիշատակ է/ սբ. աւետարանս/ Մարտիրոս վարդապետին որ ետ դռն Գեորգայ սբ. անապատ/ւին* քվին Ռձ/ՅԸ (=1639) նորոգեց/աւ ձեռամբ ուսրա Զի/ւափ/ն:

Դարձեալ ած. ողորմի աս/ացեփ տիրաց/ի Թումին/ Մինասին որ ձ/րի նդեցին բա/զում աւխասե/ցան յիշացեփ ած./ողորմիա/ սացեփ»:

Առաջին երեսը (պատկ. 18) խաչելութիւնն է. Յիսուսի աջից Մարիամ և ձախից Յովհաննէս, Մարիամ աչքերն ուղղած և ձեռքերը մեկնած դէպի որդին բարեխօսի դիրքով, իսկ Յովհաննէս ձեռքերը կրծքին խաչած: Արտասովոր է միայն նրանց հագուստը. Մարիամ երկար շապկի վերայ ձգել է կրծքին կոճկած կարճ, փրկնածև վերնազգեստ, իսկ Յովհաննէս մինչեւ սրունքները հասնող պճեղնաւոր բաճկոնի վրայից հագել է մի աւելի կարճ բաճկոնակ, վերայից գօտի կապած, այսինքն տեղական զգեստով: Սաչափայտի հորիզոնական թեւերից վեր, աջից արեգակ, ձախից լուսին: Պատկերի զաշտը քանդակուած է և կլտուածապարզ (émaillé) բոյսերով, իրենց ձիւղերի, տերեւների և ծաղիկների հետ, որոնցից երկուսը խաչափայ-



Պատկ. 18. Էջմ. N 59.
1639 թ. ա. երես:

*Ընդդժուած տառերը կցումներով:

տի գազաթին՝ աջ և ձախ թեքուած : Անկիւններում և կողքերից կիսավարդեակներ են՝ կազմուած բուսական ծաղկաւոր զարդերից , դաշտի մակերեւոյթից քիչ բարձր , քան զակուած և ոսկեզօծուած :

Միւս երեսին (պատկ. 19) Աստուածածինն է պերճ զդետով , Յիսուս մանկանը բռնել է աջ ձեռքի վերայ , երկար՝ ոտները ծածկող՝ շապիկ հագցրած : Աստուածածնի հագուստի ձեւը այն է , ինչ որ խաչելու թեան տեսարանում . լուսոյ պսակը զարդարուած արմաւենիկի սլորապտոյտով : Նկարի սոքերի տակից երկու բոյս աջ և ձախ վեր են բարձրանում իրենց սլորապտոյտ ցօղուններով և տերեւներով և միանում նկարի զըլխին , աչգպիտով մի տեսակ չըջանակ կազմում : Իսկ այս բոլորն առնուած է երկու սիւնների վերայ հաստատուած , երկու



կողմից եռամասնեայ , որաբեկ կամարի Պատկ. 19.- Էջմ. N 89. 1639 թ. բ. երես , տակ , խոյակներն ու խարխալները մի մի գնդակով տախտակների մէջ առնուած . չըջանակի ամբողջ երեսը , իւր բոլոր մասերով , զարդարուած է պարսնահիւստով : Մնացած դռնը ծածկուած է բուսական զարդով , ինչպէս առաջին երեսն էր . անկիւններից և կողքերից ևս նման քանդակուած և ոսկեզօծուած կիսավարդեակներով :

Մէջքի կեդրոնում մի վարդեակ է (պատկ. 17) , ան-

կիւններում մի մի բուսական զարդ, իսկ մնացած մասում վերեւ մէջ բերուած արձազրութիւններն են: Փակիչի դաշտը ծածկուած է նոյնպէս բուսական զարդերով և երկու երկուսը վարդեակներով. անկիւններում նման բուսական զարդերով, ինչպէս մէջքում. երկու շրջաօղով փակուած է գիրքը (պատկ. 17 և 19): Այսպիսով ձեռքի տակ ունինք ոսկերչական մի գործ, որ իւր ամբողջութեամբ ժողովրդական ձեռնարուեստ է, համապատասխան ժամանակի հոսանքին, ուստի և առանձին ուշադրութեան արժանի:

ԺԲ.

Մեր յօդուածը վերջացնել կ'կամենայինք մի աւետարանի կազմով, որ նկարել ենք Սեբաստիայի Ա. Նշան վանքում, ուր կարեւոր հնութիւնների հետ կար և ձեռագիրների բաւական մեծ ժողովածու, և որոնք հաւանօրէն կ'որոշուէին մատուցան պատերազմի ընթացքում:

Աւետարանը գրուած էր մազաղաթի վերայ, ոչ շատ նուրբ գրութեամբ, և առանց յիշատակարանի, կարծուել ենք ոչ վաղ քան ժ. Կարու պոյժ և ոչ ուշ քան 1720 թուի ըստ հետեւեալ գրութեան. «Յիւստ' է սբ. աւետարանս Ձա՛նուկեցի Սալսանի որդի Պետրոս վրդա ի: Թվիմ ԹՃՂ» յո. նվար ա.» : Կապն էլ ժ. Կարու վերջերի գործ ենք համարում և տարբեր արուեստով, քան նախընթաց երկու աւետարաններինը. այստեղ զարդարանքներից աւելի աչքի են ընկնում մարդկային պատկերները, որոնք դուրս են ընկած կազմի հարթ մակերեսի վերայ:

Առաջին երեսի կեդրոնական պատկերը խաչելութիւնն է (պատկ. 20), երկու կողմից մի մի կին կանգնած, գլուխները կորացրած եւ տխրագէմ, խաչելութեան տակ Ագամի գլուխը, իսկ հորիզոնական թեւերից վեր սրբգալ եւ լուսին. խաչի գլխին քառանկիւնի ջուշանակի վերայ գրուած է. «սյ է ք/գերից»: Չորս անկիւններում աւետարանիչների նշանակներն են, իսկ խաչելութեան գլխին ցած սաւառնող թռչնակերպ Հոգին: Շրջանակի չորս անկիւններում աւետարանիչների գլուխները, աջից երկու արքայական եւ ձախից երկու քահանայական զգեստներով պատկեր-

ներ, ամբողջ հասակով, ձեռքերին մի մի գիրք բռնած,
հին և նոր կտակարանի ներկայացուցիչներ. վերևն եւ



Պատկ. 29.- Սեբաստիոս, Սոսանա, Ժէ. դար, ա. երես:

ներքեի կողերի մէջտեղում մի մի թեաւոր հրեշտակի ան-
դրի: Շրջանակ կազմող զուգահեռական զարդերը կազմուած
պարանահիւաների մէջ գնդակների, շարքով, որ իւր ար-
ուեստով զանազանում է մարդկային պատկերների ար-
ուեստից:

Միւս երեսի (պատկ. 21) կեդրոնական պատկերը Մա-
րիամն է թաղաղարդ, Յիսուս մանուկ ձախ թևին, մայր և



Պատկ. 21.՝ Սերաստիոյ Ս. Նշան. Թե. դար. ք. երես:

որդի շքեղ զգեստաւորութեամբ: Մայրը գլուխը թեքել է
դէպի որդին, իսկ սա երկար տողայ հագած և ծիրանի
ձգած վերայից, որ աջ թևի տակից փաթաթած է մէջքին,
խաչակնքում է, դէմքն ուղղած նայողին: Պատկերի երկու
կողմից դաշտը զարդարում են մի մի ծաղիկ, իսկ աւելի

բարձր ծուկն են չոքած երկու հրեշտակ ձեռքերը իրար բերած եւ մեկնած մեծարանքի արտայայտութեամբ : Մարիամի գլխին իջնում է աղանակերայ հոգին , կողքերից կախուած են շրջանակից մի մի կանթեղ : Շրջանակի ձեռն ու պատկերները կրկնութիւն են առաջին երեսին , միայն աջ եւ ձախ կողմի կանգնած պատկերները վերեւինները ներքեւ են բերուած եւ ներքեւինները վերեւ : Գրքի բերանը փակուում է երեսների վերայ ամրացրած սիրուն , զոյգ չղթա-յաճեւ փակիչներով , ծայրերը մարդկային գլուխներով եւ օղակներով վերջացած :

* *
*

Մեր ցուցադրած նիւթերը ԺԳ. դարից սկսած կապուած են , ի հարկէ փոքր չափով , հայ ընդհանուր արուեստի եւ կուլտուրայի ընթացքին եւ եթէ տեղի սղութիւնը չարգիւ-լէր մեզ փոքր ինչ աւելի բազմակողմանի օրինակներով լուստարանել եւ համեմատել մանրանկարչական պատկերա-զրութեան եւ զարդազրութեան հետ , խնդիրը շատ աւելի պարզ կլինէր : Ինչպէս մանր արուեստի (Kleinkunst) միւս ճիւղերը , այնպէս էլ ոսկերչականը կապուած է ընդ-հանուր , ազգային արուեստի հետ , եւ աննշան նիւթ չի տալիս ամբողջի լուստարանութեան համար : Տարաբաղդաբար ԺԳ. դարից աւելի վաղ մնացորդներ չունինք այս ճիւղից , բայց յետագայ դարերի մէջ ես պահուած են որոշ չափով հնագոյն շրջանների աւանդները :

ԺԳ. եւ ԺԷ. դարերից մեզ հասած մի քանի օրինակ-ները , ինչպէս Կոստանդին կաթողիկոսի եւ Էաչի Պոռչեա-նի մատանց պահաւարները* մեր ցուցադրած կազմերի հետ զարդ կարող են լինել ամեն մի ազնիւ արուեստի համար : Կազմերի կողմից առատ նիւթ ունինք յատկապէս վերջին

* Առաջինը հրատարակել է Ալիշանը իւր «Սիսուան»-ի մէջ , իսկ երկրորդը տես մեր «Խաղբակեանք»-ը ևն , 189 . 199 :

դուրերից առաւել կամ պակաս յողորմութեամբ : Եթէ արանց
փերայ աւելացնենք եկեղեցական բազմատեսակ անօթների ,
խաչների ևն . միացորդները բուն ժողովրդական զգեստի հետ
կապուած զարդ ու զարդարանքի հետ , մեր առաջ կրաց-
ուի ընդարձակ ստպարէզ հայ մշակոյթի եւ արուեստի այս
ճիւղի ուսումնասիրութեան : Պակերջական արուեստը մեր
մանր արուեստի միւս ճիւղերի համեմատութեամբ ամենից
հարուստն է եւ ամենից հարեւորը : միայն պէտք է հաւա-
քել , ուսումնասիրել եւ մտաջելի դարձնել գիտութեան :

Նորագոյն արուեստը հետեւելով նոր գաղափարաբո-
ւութեան եւ հասարակական կեանքի ձեւակերպման , չպէտք
է կտրէ իւր օրգանական կապը անցեալի հետ , եւ պէտք է
սգտապօրծէ այն , յատկապէս , ձեւերի ստեղծագործման եւ
տեխնիկայի զարգացման մէջ : Ո՛րչափ նիւթեր կան կահ
կարասիքի , անօթների , տեղնագործութեան , զօրգազոր-
ծութեան , կտաւեղէնների եւ մետաքսեղէնների մշակու-
թեան համար , որ մինչեւ այժմ կատարեալ անուշադրու-
թեան են մատնուած մեր կողմից : Ապրում ենք պետա-
կան նոր կեանքով , որ խրախուսում է ազգային մշակոյթ-
ների պահպանութիւնն ու զարգացումը . պէտք է որոնենք
եւ գտնենք այն ուղիները , որ նոր արուեստի ծագման եւ
ծաղկման հիմունքներն են կազմում : Իսկ այդ հիմունք-
ներից մէկը , եթէ չտեսնենք ամենակարեւորը , անցեալ նիւ-
թերի հաւաքումն է , ցուցադրումը եւ նրանց՝ ուսումնասի-
րութիւնը :

Ն. Նախիկեան

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅՈՎՍԷՓԵԱՆ *



* Համաձայն Նորին Բարձրապատուութեան բողոքանքին , ներ-
կայ ընդարձակ եւ չահեկան ուսումնասիրութեան մէջ , սկիզբէն
մինչեւ վերջը՝ կը պահենք ռազմագրութիւնը , այնպէս , ինչպէս որ
հասած է մեզ :

Խմբ. « Տաթեւ »

Յօդուածի եւ Կաղապարներու արտատպման
ամէն իրաւունք վերապահուած է ՏԱԹԵԼԻ ԽՃԲԱ-
ԳՐԱԹԵԱՆ :

Ստանալու համար դիմել՝

Evêque ARDAVAZT SURMÉYAN

B. P. 133

ALEP (Syrie)

Դին 5 Քրանք

175

0009252

2013

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0009252

